Սուսաննա Գ. Հովհաննիսյան
*Բանաս. գիտ. դոկտոր*

**«Փորձությունը ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմագրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով»[1]:**
**Հովհ. Թումանյան, 1915 թ. հուլիս**

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ*

**Բանալի բառեր** – Թումանյան, էջմիածին, որբեր, եղեռն, օրագիր, գաղթականներ, սևագրություն, գրառում, երեխաներ, Սաթենիկ Օհանջանյան, Ազգային բյուրո, Վան, Ալաշկերտ, Մուշ, Գործոթ, Տիրամերիկ, Աբաղա, Բերկրի, Խնձորկեն, Բիթլիս, Դատվան, Փանչի, Մանազկերտ:

## Մուտք

**Եղեռնի տարիներին մեր գրականության մեծերից ոչ մեկն իր ուսերին չի վերցրել հայոց վշտի ու հոգսերի այնպիսի բեռ, չի դրսևորել այնքան անձնազոհություն որքան Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:**

1914 թ. նոյեմբերի կեսերից մինչև դեկտեմբերի կեսը Թումանյանը գնաց կոտորածների թարմ հետքերով, Արևմտյան Հայաստանի ամայացած գյուղերով ու քաղաքներով, իր աչքերով տեսավ թուրքերի զարհուրելի վայրագությունների հետևանքները[2]: Այդ ամենին գրողն ականատես եղավ նաև 1915 թ. հունիսի առաջին օրերից մինչև հունիսի 26-ը, երբ նա շուրջ երկու շաբաթ Վանում էր: Արևմտյան Հայաստանում նա մերթ արտասվեց ու ծնկի եկավ հայ եկեղեցիներում, մերթ հույսի ու լույսի խոսքերով գոտեպնդեց իր օրհասն ապրող արևմտահայությանը, իսկ երբ վերջինս գաղթական դար-

---

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15. 04. 2017:

1 **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով (այսուհետ՝ **Թումանյան**, ԵԼԺ), Եր. 1995, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., հատ. 7, էջ 177:

2 Այս մասին ավելի մանրամասն տես «Վէմ» համահայկական հանդես, Զ(ԺԲ) տարի, 2014, N 2 (46), էջ 224–243:

ձած, լցրեց Էջմիածինը, խնամեց հայ որբերին, դարձավ որբերի Ամենայն հայոց հայրիկը:

## 1. Մեծ եղեռնը Թումանյանի օրագրերում և սևագրություններում

Արևմտյան Հայաստանում Թումանյանը գրի էր առնում այն, ինչ տեսնում էր ու լսում, ու թեև նրա օրագրային գրառումները կցկտուր են, գրված են հապճեպ, ոտքի վրա, իսկ որոշ նշումներ պարզապես անհասկանալի են կամ անընթեռնելի, սակայն չափազանց արժեքավոր վավերագրեր են և ունեն պատմաճանաչողական մեծ արժեք[3]:

1915 թ. հունիսին Վանում բանաստեղծը հպարտությամբ գրի է առել 300 երեխաներ փրկած ուսուցիչներ Հակոբ Ջրբաշյանի և Արփիար Սաֆրաստյանի սխրանքը: Հերոսամարտի նախօրյակին նրանք կարողացել էին Վարագի գիշերօթիկ դպրոցի երեխաներին առևանգելու նպատակով եկած թուրքերին հարբեցնել և քնացնել, իսկ ճեմարանի սաներին լռելյայն դուրս հանել վանքից ու գաղտնի լեռնային արահետներով հասցնել Վան: Հետևյալ օրը գազազած ու խաբված թուրքերը թալանել էին վանքը և սպանել վանականներին:

Թումանյանի ծոցատետրում հանդիպում ենք **ահազարհուր դեպքերի** մասին գրառումների, որոնք նա մեծ մասամբ լսել էր ականատեսներից, իսկ մի մասի հետքերն էլ տեսել էր անձամբ: «Վանի նահանգի ժամանակ, գրում է Թումանյանը, երբ բոլոր ժողովուրդը գնաց, պառավները մնացին իրենց դռներին նստած»[4]: Շատերն իրենց տներն այրել են, որ թուրքերին չմնա: Ոմանք էլ բանալիները հանձնել են կամավորներին, որ նրանք հրդեհի մատնեն ամեն ինչ և չթողնեն թուրքին. «Վանեցիներից շատերն իրենց տները կրակում են – էնպես հեռանում, ոմանք էլ բանալիները տալիս են կամավորներին թե դուք կրակեցեք մեր գնալուց հետո»[5]: Առավել սահմռկեցուցիչ գրառում կա Շատախից նահանջի մասին. ոմանք չեն կամեցել, որ իրենց մահամերձ հարազատներն ու գաղթի ճանապարհը բռնելու անընդունակ տարեցները թշնամու ձեռքն ընկնեն, պղծվեն, անարգվեն ու տանջամահ լինեն և խնդրի լուծման ահազարհուր տարբերակ են ընտրել: Գրողին պատմել են, որ «Շատախեցիք գաղթելուց առաջ կոտորել են իրենց ծերունի հայրերին ու մայրերին ու հիվանդներին, իրենց ձեռքով թաղել էնպես եկել»[6]: Նման վարքագիծը հազվադեպ է եղել: Առավել բնորոշն այն էր, որ զավակները չեն լքել տարեց ու հիվանդ ծնողներին. «Կային այլ տեղերից, շալակած ոտով բերում էին իրենց պառավ ծնողներին»[7] – գրում է բանաստեղծը և հավելում, որ 10–12 տարեկան երեխաները գրկած տարել են իրենց փոքր եղբայրներին ու քույրերին, 4–5 տարեկան երեխաները «օրական 30 վերստ ճամփա են եկել»[8], իսկ վանեցի մի աղջիկ

3 Տես **Թումանյան**, ԵԼԺ, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ, հատ. 8, էջ 349–391:
4 Նույն տեղում, էջ 402:
5 Նույն տեղում:
6 Նույն տեղում, էջ 404:
7 Նույն տեղում:
8 Նույն տեղում:

«չորաքթաթի տալով է հասել Էջմիածին»[9] :

1915 թ. հունիսին Աղթամար կղզում բանաստեղծը, լսելով Քեռու օգնական Ջալլադին, գրի է առնում նրա պատմածը. «Վարդանը, Խեչոն ու Դանիել վարդապետը Աղթամար անցնելու ժամանակ տեսնում են երեխեն ընկել է ջուրը, ջուրը տանում է: Հերը նստած է, ներս չի մտնում հանելու, իսկ մերը չի կարողանում տեղիցը շարժվի, էնքան ուժասպառ է եղած»[10]:

Թերևս ամենասարսափելին հուլիսի 29-ին Իգդիրում արված Թումանյանի գրառումն է. «**Թուրքերն ու քրդերը հայ գյուղերում կոտորելիս ամեն մի տեղ մի ձև են մտածել – մի տեղ խաչել են ու խփել կամ խորովել – ինչպես Գործոթ ու Տիրամերիկ, մի տեղ փորերը ճղել են ու աղիքներով զանազան խաղեր հորինել – վզներով ոտներով փաթաթել են – մի տեղ մորթոտել են, մի այլ տեղ գետն են ածել կապած (Աբաղա, Բերկրու կամուրջը), մի այլ տեղ (Խնձորկեն) (100 տնից ավելի) բոլորին՝ երեխաներին ու կանանց կախել են իրենց տներում օճորքների գերաններից (տղամարդկանց ձորումն են կոտորել)»[11]:**

Մարդկության պատմությունը նաև պատերազմների պատմություն է: Միշտ էլ ուժեղը փորձել է տիրանալ տկարին, խլել նրա ունեցվածքը, երկիրը, ստրկացնել: Եվ միշտ, բոլոր ժամանակներում դաժանությունը ուղեկցել է մարդուն: Բայց այն, ինչ հայության հետ տեղի էր ունենում Եղեռնի տարիներին, վեր էր մարդկային երևակայությունից: Ստեղծագործ միտք դրսևորել՝ «**աղիքներով խաղեր հորինել**», որպեսզի առավելագույն հաճույք ստանալ արյունից, երեխաների ճիչերից ու սարսափներից, թվում է՝ բնորոշ պիտի լիներ միայն հոգեկան շեղում ունեցող մոլագարներին, այն էլ ոչ բոլորին: Անձամբ հանդիպելով **մարդ-գազանին՝** գրողը համոզվեց, որ հայերին կոտորում էին ոչ միայն նրանց հայրենիքին տիրանալու կամ հայկական հարցը միջազգային ատյաններում մեկընդմիշտ լուծելու համար: Գրեթե ազգովի թուրքն ու քուրդը հատուկ ջանք էին թափում՝ առավել «հետաքրքիր դարձնելու» ջարդն ու կոտորածը, որպեսզի հպարտանային մարդկանց կոտորելու ձևերի բազմազանությամբ, ոչ մարդկային ուղեղներն աշխատացնում էին միայն այդ ուղղությամբ և ինչ-որ բնազդային հաճույք էին ստանում արյան ու տանջանքի խրախճանքից. **«Մի տեղ – շտիկը փորներն են կոխել – գլխներին կացնով զարկել»[12]:** Մուշում հայ ընտանիքներին այրել են հենց իրենց տներում[13]: Եթե այսօր և, համոզված ենք, միշտ, այս ամենը կարդալիս մարդու մարմնով սարսուռ է անցնում, ապա ի՞նչ պիտի զգար Ամենայն հայոց բանաստեղծի զգայուն սիրտը, երբ լսում էր այս ամենը ականատեսներից և ամենուր տեսնում էր վայրագ թշնամու արյան խրախճանքի մնացորդները: Լսում, տեսնում ու գրի էր առնում:

Թումանյանը գրի է առել նաև, թե ինչպես **Բիթլիսում** 7 տարեկանից բարձր բոլոր տղաներին տարել են քաղաքից դուրս «հավաքել են կազարմաները ու ամեն օր 200-ական հանել քաղաքից դուրս, իրենց մեծ

---

9 Նույն տեղում, էջ 409:
10 Նույն տեղում, էջ 397:
11 Նույն տեղում, էջ 401:
12 Նույն տեղում, էջ 405:
13 Տես նույն տեղում, էջ 407:

փոսերը փորել տալիս»[14], այսինքն՝ ստիպել են իրենց իսկ գերեզմանները փորել և բոլորին կենդանի թաղել... 7 տարեկան երեխաներին... Նույն կերպ վարվել են **Դատվանում** ու նրա շրջակայքում, բայց այս անգամ օգտագործելով ցորենի հորերը իբրև գերեզման. «Ցորենի հորերը դատարկել են, ժողովրդին ածել մեջը, ծածկել»[15]:

**Արաղայում** կատարված գրառման մեջ նկարագրվում է թուրքի նույն ձեռագիրը՝ նահանջելիս սպանել ու կոտորել ամենքին ու ամեն ինչ և գյուղերը ամայացնել ոչ միայն «բնությունից, այլև բնակությունից,– գրում է Թումանյանը,– էսպիսով՝ երկիրը գրեթե ամայի է բնակիչներից: Սահմանից մինչև հասել են ռուս բանակն ու հայ կամավորները, երկիրն ավերելով և կոտորելով՝ նրանց առջևից խուսափել են թուրքն ու քուրդը: Եվ նրանց հետքերը՝ ամեն կողմ ավերակ է ու դիակների գարշահոտություն: Ճանապարհների վրա դիակներ, գետափերին՝ դիակներ... Վանա լիճը չորս կողմից դիակներ է դուրս ձգում»[16]:

Գրողի տպավորություններից պետք է ծնվեին պատմաքաղաքական վերլուծություններով հրապարակախոսական, պատմագիտական ու գեղարվեստական երկեր, սակայն մնացին սևագիր վիճակում: Այդ **սևագրությունները** նույնպես այսօր վավերագրի արժեք ունեն. նրանցում արտահայտվում են Եղեռնին ականատես բանաստեղծի վկայություններն ու մտորումները: Դրանցում հեղինակն ընդգծեց ցեղասպանության սարսափները, իսկ գեղարվեստական մի շարք երկերում կերտեց մարդ-գազանի կերպարը:

1914–1918 թթ. Թումանյանի գրած շուրջ 100 գրաքննադատական ու հասարակական - քաղաքական բնույթի հրապարակախոսական հոդվածներից 18-ը մնացել է անավարտ ու սևագիր վիճակում: Դրանցից է **«Ավերակների ու դիակների աշխարհում»** սևագիր հոդվածը, որն այդպես էլ ո՛չ ժամանակ, ո՛չ էլ ուժ է գտնում ավարտելու և տպագրության հանձնելու: Այստեղ նա նկարագրում է «Տաճկահայաստան կոչված դժոխքում»[17] հրկիզված գյուղերի, ավերված շեների, թուրքերի «որջերի» և լսած ու տեսած սարսափների մասին: Գրողը տեսավ գազանություններ գործած թշնամուն՝ գերված, տեսավ նաև նրա սարսափազդու հետքը. «Որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերին, գլխավորապես տղամարդկանց, ու հետները տարել գեղեցիկ կանանց, և եթե ժամանակ են ունեցել, ռուսական բանակի ու հայ կամավորների սարսափը շատ մոտ չի եղել, **բարբարոսական զվարճություններ** են հորինել: **Երեխաների ճակատներին մեխ են զարկել, խաչել են, կենդանի մարդկանց մարմնի զանազան մասեր կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել, մինչև կեսը դրել են պղինձն ու կեսից ներքև եփել, որ մյուս մասը կենդանի տեսնի ու զգա, շիկացած երկաթներով էրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել են, կենդանի խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին»**[18] (ընդգծումը

14 Նույն տեղում, էջ 402:
15 Նույն տեղում, էջ 403:
16 Նույն տեղում, հատ 7, էջ 578:
17 Նույն տեղում, էջ 441:
18 Նույն տեղում, հատ 7, էջ 440:

մերն է – Ս.Հ.): Ընդ որում, զգացվում է, որ գրելիս պոետի շունչը կտրվել է, չի կարողացել ավելի մեծ սարսափները ներկայացնել, քանի որ այդ նկարագրությունները ընդմիջել է **«Եվ այլն, և այլն, և այլն»** խոսքերով, ապա դրանք ջնջել՝ գուցե խորհելով, թե ոչ ամեն ինչ է պետք պատմել մարդկությանը գազանից անհամեմատ սարսափելի մարդ արարածի և ոչ թե մեկի, այլ զանգվածների՝ մարդկային ուղեղին ոչ հասու թերևս չլսված ու չտեսնված մարդկային վայրագությունների մասին: Թումանյանը միշտ էլ այն կարծիքին էր, որ գազանների աշխարհը պիտի վիրավորվի, երբ մարդու դաժանությունը ընդգծելու համար նրան անվանում են «գազան», քանզի գազանի գազանությունը միայն բնության մեջ իր գոյությունը պահպանելու համար է, մինչդեռ մարդու գազանությունը գիտակցված է և կարող է նույնիսկ հոգեկան հաճույք պատճառել: Բնական է, որ այս ամենից հետո հայ մարդու մեջ իշխողը պետք է լիներ հարազատների արյան համար վրեժի զգացողությունը, կարող էր ծնվել նաև թշնամուն իր իսկ զենքով ու թերևս իր մեթոդներով պատժելու ցանկությունը, որն ավելի մեծ անհանգստություն է պատճառում բանաստեղծին. «**Էսպեսով գազանության են հասցրել նաև շատ հայերի ու կործանել են մեր ցեղը ոչ միայն ֆիզիկապես, այլև բարոյապես** »[19] (ընդգծումը մերն է – Ս. Հ. **):**

**1915 թ. Վանի հուլիսյան գաղթը** սկսվել էր ռուսական բանակի անակնկալ նահանջի հետևանքով, որը մեծ խուճապ էր առաջացրել հայության մեջ: Արդեն գրողի ժամանակակիցները այն անվանեցին ռուսական սադրանք՝ «կեղծ նահանջ»: **Վանի բնակչության խուճապահար գաղթը սկսվում է 1915 թ. հուլիսի 18-ի գիշերը: Նույն օրը երեկոյան հրդեհվում են Վանի 300 լավագույն տները՝ թշնամուն չթողնելու համար: Հուլիսի 19-ին Վանը թողնում է գեներալ Նիկոլաևը[20]: Դեպքերի ականատես պատմաբան Համո Հարությունյանը գրում է. «Դա ահավոր ու կսկծալի մի գաղթ էր: Վան-Վասպուրականից մինչև Իգդիր գտնվող ճանապարհը ծածկված էր խուճապահար ժողովրդով, իրար էին խառնվել կին ու երեխա, մարդ ու անասուն, կենդանիներ, կառքեր, սայլեր... ճանապարհի չորս կողմը լաց ու կոծ, աղմուկ, աղաղակ, սրտաճմլիկ տեսարաններ, որոնք հնարավոր չէ նկարագրել»[21]: «Վանից մինչև Խոյ և Իգդիր ընկած ճանապարհի երկայնքով սփռված էին հայ գաղթականների դիակներ: Կրծքի երեխաներն առանց բացառության մահացան: Շատերը սովից, ծարավից և բնակլիմայական անբարենպաստ պայմաններից հյուծվելով տապալվում էին գետնին»[22]**,– հավելում է պատմաբան Հովհ. Տեր-Մարտիրոսյանը (Ա-Դո):

Այսպես հուլիսին ռուսական զորքերը թողնում են Վանը: Մեկ ամիս էլ չէր անցել, ինչ վանեցիները խանդավառությամբ ու սիրով, ազատության հույսերով Վանում ընդունել էին Թումանյանին. ընդամենը օրեր անց՝ բանաստեղծի՝ Վանից վերադառնալուց հետո, սկսվել էր ռազմական տեսանկյունից չարդարացված այդ նահանջը Արևմտահայաստանի ազատա-

19 Նույն տեղում, էջ 441:

20 Գեներալ Նիկոլաև Դանիել- 1852-1942 – ազգությամբ բուլղարացի:

21 **Հ. Հարությունյան**, Վասպուրականի 4000-ամյա Համառոտ պատմություն, Երկրորդ մաս, (1908 – 1918), տետր, 4, էջ 752 (պրոֆ. **Համո Հարությունյան**, անձնական արխիվ):

22 **Ա-Դո**, Մեծ դեպքերը Վասպուրականում, 1914-1915 թթ., Եր., 1917, էջ 476:

գրված վայրերից ու Վասպուրականից: Եթե Թումանյանը ավելի երկար մնար Վանում, նա նույնպես կլիներ գաղթականների այն վիթխարի բազմության մեջ, որը խուճապահար բռնել էր Էջմիածնի ճանապարհը: Սակայն նախախնամության կամքն այլ էր. հունիսի 27-ին, երբ պոետը դուրս եկավ Վանից, մտքով անգամ չէր անցնում, որ այդքան շուտ Վանը նորից կարող է հանձնվել: **1915 թ. հուլիսի 23-ից Թիֆլիսում** լուրեր են տպագրվում **Վանից, Ալաշկերտից և Արևմտյան Հայաստանի այլ բնակավայրերից դեպի Իգդիր ու Էջմիածին** եկող բազմահազար հայության մասին: Չորս օր անց «Հորիզոնը» իր «Նոր աղետի առաջ» խմբագրականում գուժեց. «Այսօրվա հեռագիրները այլևս կասկած չեն թողնում: Սարիղամիշի ընդհանուր նահանջից հետո հայությանը հասած երկրորդ գույժը թյուրքահայերի նոր խուճապն է ...Թյուրքահայությունը՝ մերկ, բոկոտն, քաղցած, համաճարակ հիվանդություններից թուլացած, այսօր թափառականի ցուպը ձեռքին նորից Արարատյան դաշտի ճամփան է բռնել»[23]:

Եղեռնից մազապուրծ գաղթականությանը հուսադրելու համար գրողը Թիֆլիսում գրում և 1915 թ. հուլիսի 26-ին տպագրում է **«Հանգիստ ու լիքը հավատով»** հոդվածը: Հումանիստ բանաստեղծն այլևս լռել չէր կարող և վերստին հիշեցնում էր, որ թուրքը՝ **«վատթար»** թշնամին[24], ունի «**միշտ արյունոտ ու հավիտյան նզովված ձեռք»[25]**, որ թուրքի երկիր **Տաճկաստանը միայն սպանդանոց է,** ուր մեկը «**միշտ մորթվել է ու հոշոտվել, իսկ մյուսն սպասել է իր հերթին**, հաստատ իմանալով ու շարունակ հիշելով, որ էդ հերթը պիտի գա մի օր»[26]: Այդ ելույթը վրդովված բանաստեղծի զայրույթի, նզովքի խոսքն էր ու նաև մեծ փորձության ու ահռելի աղետի պահին չվհատվելու, միասին, միահամուռ մի բռունցք դառնալու կոչ. «**Համատարած կոտորածով ճգնում են բնաջինջ անեն մեր հին ու ազնիվ ցեղը, մեր շատ տառապած ու ծվատված ցեղը...**

**Մեծ է փորձությունն ու աղետն ահռելի:**

**Բայց մենք երեկ-մեկել օրվա ժողովուրդը չենք, առաջին անգամը չենք տեսնում էս տեսակ աղետ, և ինչ որ տեսնում ենք, անօրինակ չի մեզ համար:**

**Սրանից շատ ավելի մեծ աղետներ ենք տեսել, շատ ավելի մեծ տարածությունների վրա, շատ ավելի երկար ժամանակներով, շատ ավելի ծանր կորուստներով.... ոչ ոք հուսահատի ու վհատի խոսքեր չպետք է անի, որ հատուկ է ձախորդ վայրկենին, փորձությունը ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ**»[27]:

Մի քանի օրում Վանը զրկվել էր ողջ հայ բնակչությունից, ու թեև շուտով՝ հոկտեմբերի 14-ին, Վանը նորից հայտնվում է հայերի ձեռքում (նախ Սմբատն է մտնում Վան հայ կամավորական ջոկատների ուղեկցությամբ, ապա՝ դեկտեմբերի 23-ին, Անդրանիկը), բայց կորուստն անդառնալի էր:

Վատառողջ Թումանյանը բժիշկների պարտադրանքով Տաբախմելա ամառանոցում էր, երբ լսում է համատարած գաղթի լուրը: Մի վայրկյան

23 «Հորիզոն», Թիֆլիս, 1915, հուլիսի 22, N 162:
24 Տես Թումանյան, ԵԼԺ, հատ. 7, էջ 177:
25 Նույն տեղում, էջ 176:
26 Նույն տեղում, էջ 194:
27 Նույն տեղում, էջ 178-177:

անգամ չի հապաղում և անմիջապես վերադառնում է Թիֆլիս, այնտեղից՝ **Էջմիածին:**

## 2. Էջմիածնի դժոխքում

Արարատյան դաշտ էին գալիս **Ալաշկերտի, Էրզրումի, Մուշի և Վանի** կոտորածներից մազապուրծ հայության վերջին բեկորները: Գաղթականությունը կուչ էր եկել Էջմիածնի պատերի տակ: 1915 թ. ամառ. ամենածանր, եղերական ժամանակաշրջանը հայ ժողովրդի համար: Թումանյանի հոգսերը հազարապատկվել էին: Որքան էլ փորձեր թաքցնել, հոգու խորքում զայրացած էր, դառնացած, բայց ոչ հուսահատված. գերմարդկային ճիգերով փորձում էր ժողովրդին պիտանի լինելու ուժ գտնել իր մեջ: Հուլիսի 29-ի գիշերը նա արդեն Էջմիածնի դժոխքում էր:

Էջմիածնի վանքի բակում տասնյակ հազարավոր գաղթականներ էին հավաքվել: Ժողովրդի անասելի տառապանքները, զարհուրանքները, հոգևոր մայրաքաղաքում անվերջ ծավալվող դժոխային տեսարանների սարսափը, քաղցը, ամառվա կիզիչ տապը, երկար անցած-կտրած ճանապարհը պարզապես ուժասպառ էր արել ամենքին, որոնց մեջ բանաստեղծը նկատում և առանձնացնում էր. «Ինտելիգենտ դեմքեր... տանջված, հոգնած, լուռ.. Ծերեր... Գեղեցիկներ... Ծծի երեխաներ»[28]:

Էջմիածնի ճանապարհին բանաստեղծը նկատում է և նշում, որ գաղթականների մի մասը քնած էր, ոմանք բոլորվել էին կրակի շուրջը, ոմանք լուռ էին, ոմանք տնքում էին ցավից ու տառապանքից կամ լաց լինում, Բոլորը հարցնում էին. «– Ո՞րն է Էջմիածնի ճամփեն»[29]: «Ես երբեք էսքան տխուր չեմ լսել Էջմիածնի զանգերի ձենը... ո՛ւր, մինչև ո՛ւր են հասնում արդյոք էս հառաչանքն ու կոծը»[30], – գրել է բանաստեղծը:

Հուլիսի 30-ի առավոտյան գաղթականների բազմությունից Էջմիածնում ասեղ գցելու տեղ չկար: Թումանյանը նկարագրում է. «Ժխոր, լաց, խնդիր, հառաչանք, սուգ-Ծով-

Մեջտեղը ղողանջում են Էջմիածնի զանգերը-լայնածավալ հառաչանքի նման-

Մեռածները թափված առավոտները: Գիշերվա սուգը – գերեզմանը կորուկ... մայրերը՝ ծնկներին մեռած երեխաները – մարդը ծեծում է կնոջը, թե երեխաները որտե՞ղ կորցրիր: Երեխաները անտեր լաց են լինում ճամփեքին գիշերը մթնում-

..... Երկար-խառն ու աղքատ, սոված-ծարավ շարքը-վերջ չունի – արևի տակ, փոշու ամպի մեջ – լուռ ու հնազանդ իր ճակատագրին, ոմանք գոհ են, որ ապահով են արդեն – երեխաներ էլ կան, որ ուրախանում են էս հսկայական ուխտագնացության թե զբոսանքի համար...»[31]:

**Հակոբ Սառիկյանը**[32] հավաստում է, որ հիշելով Էջմիածնում անց-

28 Նույն տեղում, հատ. 8, էջ 405-406:

29 Նույն տեղում, էջ 405:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում:

32 **Սառիկյան Հակոբ Արզումանի** (20.12.1872, Ղազախի շրջ. գ. Վերին Աղդան-1945, Երևան) մանկավարժ, թարգմանիչ, հրապարակախոս, ՀՅԴ անդամ, Խանասորի արշավանքի ակտիվ մասնակից ու կազմակերպիչներից մեկը (պահպանվում է նրա օրագիրը, որի գրառումները կատարել է 1914 թ.

կացրած ամիսները, Թումանյանը «**Սարսափով ու առանձին զայրույթով էր պատմում հայ գաղթականների ծանր դրության մասին**... հատկապես Վաղարշապատում....

– Ավելի ծանր, ավելի ողբալի վիճակ, քան ես տեսա Էջմիածնում, դու երևակայել չես կարող,– ասում էր նա ինձ: –Բազմահազար ժողովուրդ... Քնում էին որտեղ ասես՝ դաշտում, անձրևի տակ, գոմերում, պատերի տակ: Ուտում էին ինչ ասես. այդ գյուղերում դեղի համար շուն, կատու չէր մնացել: Ամեն առավոտ հարյուրներով, հազարներով դիակներ էին թափված լինում: Մենք քայլում էինք այդ դիակների վրայով: Տեր-տիրական չկար: **Բծավոր տիֆը** հնձում էր թշվառներին, որոնք եկել էին Էջմիածնի հույսով, սակայն Էջմիածնից ոչինչ չէին ստանում. **գոնե դիակները հավաքեին ու թաղեին...**»[33]:

Ժամանակի մտավորականներից ով էլ եղել է Էջմիածնում թեկուզ մեկ օր, սարսափով է ներկայացնում քաղաքը: **Վ. Թոթովենցի** վկայությամբ. «Վանքի բակում հավաքվել էր տասնյակ հազարավոր գաղթականություն: Ամեն կետում մարդ էր մեռնում, երեխաները ճչում էին, ծերերը՝ տնքում, աղերսում... Մեռնում էր մի ամբողջ ժողովուրդ: Փոսերը ինչքան խոր և լայն էին փորվում, չէին բավարարում մահվան օրական հունձքի համար: Մահը հնձում էր ոչ թե մանգաղով կամ գերանդիով, այլ կարծես անիմանալի նորագյուտ ինչ-որ մեքենայով»[34]:

Նույնն է վկայում **Արսեն Հացագործյանը,** ում խոսքերով Վանի «Որբացած ժողովուրդն անհույս ու անճար թափվել էր Էջմիածնի պատերի տակ՝ սպասելով իր մահվան... Եվ մահը չէր ուշանում»[35]: Գաղթականությունը ծվարել էր Էջմիածնի Վանքի բակում, Գևորգյան լճի շրջակայքում, անտառում և այլուր:

Այս ամենին ականատես տառապող բանաստեղծի տանջանքներին գումարվում էին անքնությունն ու մղձավանջը. «Գիշերները– համատարած տնքոց, հառաչանք, տեղ-տեղ լաց, ամենը թափված - գետնատարած -երբեմն-երբեմն սև ստվերներ»[36]: Դեռ «Գիքորը» գրելիս, Թումանյանը նկատել էր, որ լեռնական, սառը աղբյուրներին սովոր մարդը հիվանդանալիս այդ ջրերի կարիքն էր զգում, ինչպես Գիքորն էր հիվանդանոցում մահից առաջ իրենց աղբյուրի ջուրը ուզում: Այժմ նա տեսնում էր, որ «Բոլոր հիվանդները տաքության մեջ աղբյուրներ են զառանցում: – Օխնր, օխնր»[37]:

Թումանյանը **հայրենի բնության պաշտամունք** ուներ: Սակայն բնությունը նրա համար նաև փիլիսոփայություն էր, հայրենիք, գեղագիտական

հոկտեմբերից մինչև 1915 թ. հունիս ամիսը Արևմտյան ռազմաճակատում), մտերիմ է եղել ազգային գործիչներից հատկապես Ավետիս Ահարոնյանի հետ: 140 էջի սահմաններում շարադրել է «Հայ հեղափոխական Դաշնակցության 1912 թ. մեծ դատը»: Եղել է Թումանյանի բարեկամներից, վայելել բանաստեղծի անկեղծ սերն ու հարգանքը:

33 Թումանյանը ժամանակակիցների հուշերում, (այսուհետև՝ ԹԺՀ), Եր. ԳԱ հրատ, էջ 504: Իհարկե, հուշագրի հաղորդման մեջ կան որոշ վրիպումներ, Թումանյանը չէր ասի, որ քայլում է դիակների վրայով և ոչ էլ այն, թե «Էջմիածնից ոչինչ չէին ստանում», քանի որ այնտեղ գաղթականությանը ձեռք մեկնողներից մեկն էլ ինքն էր: Պետք է հաշվի առնել հուշերը գրելու ժամանակաշրջանը՝ խորհրդային տարիները:

34 ԹԺՀ, էջ 136:

35 Նույն տեղում, էջ 584:

36 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 409:

37 Նույն տեղում, էջ 411:

իդեալ: Նկատի ունենալով Էջմիածնից մինչև Վան ձգվող գաղթականների քարավանները՝ պոետը գրում է. «**Ես աշխատում էի չնայել Արաքսին ու Մասիսին**... Բայց այնուամենայնիվ նայեցի մի անհասկանալի երկյուղով – Մասիսի գլուխը ծածկված էր ամպերի տակ-Արաքսը ձեն չէր հանում – չէր որոտում – Ծանր ու խոր թշշում էր...»[38]:

Երբ գրողը հասավ Էջմիածին, շուրջ 500 որբ երեխաներ էին ապաստանել ճեմարանի շենքում. ընդամենը օրերի ընթացքում այդ թիվը քառապատկվում է. «Անկարելի է նկարագրել, թե ինչ զարհուրելի աղետ է, որին ականատես եմ ես»[39], – գրում է նա օգոստոսի 8-ին: Օգոստոսի 14-ին, Էջմիածնում ապաստանած 500 որբերի թիվը անցել էր երեք հազարից և «նոր որբանոց է բացվում բաց օդում»[40]:

Էջմիածնի տպարանի դահլիճը ծառայում էր որպես պահեստ դրսից իբրև օգնություն եկող մթերքի ու հագուստի համար: Օգոստոսի առաջին օրերին ճեմարանում ապաստանել էին 2000 որբ երեխա, մինչդեռ ննջարանը կարող էր տեղավորել միայն 405-ին: Այդ պահին ճեմարանից վարժոցում կարողանում են տեղավորել ևս 200 երեխա: Ուսումնական տարին հետաձգվել էր, իսկ ճեմարանը վերածվել էր հիվանդանոցի[41], որը բավարար չէր ամենքին ընդունելու: Այդ պատճառով երեխաների մի մասին տեղավորում են գյուղի տներում: Թումանյանն այդ օրերին Էջմիածնում Շատախից, Վանից, Գյավաշից, Հայոց ձորից, Կարկառից, Կարճկանից, Մոկսից, Ալջավազից, Թիմարից, Խլաթ-Բիթլիսից և այլ վայրերից գաղթած մոտ 45 785 հայությանը հաց էր բաժանում[42]:

Այնուամենայնիվ, կյանքը շարունակվում էր: Գաղթականների գործով զբաղվելու համար կամավոր եկած երիտասարդները ոչ միայն նկատում էին գեղեցիկ անուններ ունեցող արևմտահայ գեղեցիկ աղջիկներին՝ **Միրվարդին, Քարմիլեին ու Ալվարդին,** այլև հիանում նրանցով, սիրահարվում: Այդ գեղեցկուհիներից մեկին՝ «շատախցի բարձրահասակ, ու նրբակազմ, գեղեցիկ... նազելի հասակով» Թանգիկին էր սիրահարվել **Ստեփան Լիսիցյանի որդին՝ Լևոն Լիսիցյանը: Թանգիկն** անվերջ փախչում էր ու փնտրում հարազատներին. «Օրերով որոնում էին ու չէին գտնում նրան... Լևոն Լիսիցյանը որոշել էր ինչ գնով էլ լինի գտնել Թանգիկին, համոզել, իր հետ տանել Թիֆլիս, բայց նրան այլևս չգտանք»[43]:

Անպատմելի սարսափների մեջ անգամ գաղթականներից ոմանք երգում էին, իհարկե, ողբի ու ցավի երգեր, ցավոք, նաև թշնամու լեզվով, բայց երգեր, որոնցից բանաստեղծի դստեր հիշողության մեջ մնացել է գիշերվա ուշ ժամերին հնչող քրդական ժողովրդական «Հեդի բաժո» տխուր երգի ելևէջները. «Արդյոք ո՞ր մայրն էր սգում իր որդուն, կամ ո՞վ էր, որ հիշում էր իր հայրենի վայրերը և այդքան տխրությամբ կանչում... Էջմիածնում անցկացրած օրերի միակ երգն էր, որ լսվում էր գիշերվա ուշ

38 Նույն տեղում, էջ 406:

39 Նույն տեղում, հատ 10, էջ 228:

40 Նույն տեղում, էջ 229:

41 Տես Թումանյանի ընտանիքի նամականին, էջ 72:

42 Տես **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 407:

43 **Նվարդ Թումանյան**, Հուշեր և զրույցներ, Եր., 2009, «Էդիթ Պրինտ» հրատ., էջ 125: Գուցե խենթացած, գուցե համաճարակի զոհ դարձած Թանգիկի մասին լսելով՝ Դ.Դեմիրճյանը որոշում է նրա անունով կոչել իր «Դատաստան» դրամայի հերոսուհուն:

ժամերին հառաչանքի ու մրմուռի միջից»[44]:

Բանաստեղծի՝ այդ օրերի տպավորությունների ու նաև լսած երգերի մասին են ավելի ուշ՝ 1918 թ. հուլիսի 12-ին, գրված այս տողերը.

**Ո՞ւր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ.**
**Ո՞ւմ մոտ գընաս, ծանոթդ, ընկերդ արյունոտ.**
**Ո՞նց մոռանաս էս աշխարհքը արյունոտ,**
**Երգ ես լըսում, լըսած երգդ արյունոտ**[45]:

## 3. Ապրելու խնդրանքների ու աղերսների ծովում

Գրողն ապրում էր թշվառության ծովում, մղձավանջային իրականության մեջ, ուր համատարած մահ էր, լավագույն դեպքում հիվանդների տնքոցներ, քաղցած ու դժգոհ երեխաների լաց ու աղմուկ, հարազատներին ամեն վայրկյան կորցնող և նրանց մահը սգացողների սրտաճմլիկ տեսարաններ: Գրեթե ամեն օր նա գաղթականներից ու որբերից նամակ-դիմումներ էր ստանում՝ սովից ու հիվանդությունից փրկելու խնդրանքներով: Ալաշկերտցի գաղթականները **1915 թ. օգոստոսի 7-ին** իրենց կոլեկտիվ նամակում գրում են. «Դիմում ենք Ձեզ, պ. Թումանյան, համոզված լինելով, որ **ամենքեն պայծառ կերպով Դուք կիասկնաք մեր տառապանքը**, ամենից քաջ ծանոթը կը լինեք մեր ցավերին... Ձեր մարդասիրության շնորհիվ չի թողնվիր, որ անիրավ քրդի ու տաճիկի սրից ճողոպրած հայ ժողովրդի բեկորը սովից ու քաղցից մարի»[46]:

Նման սրտաճմլիկ աղերսներից է նաև **«Դիեն գյուղի փախստականներ»** ստորագրությամբ պոետին ուղղված մի այլ նամակ, որում ասվում էր. «Մեր գյուղը 350 տնից էր բաղկացած՝ 2000 բնակչով, բոլորը անխտիր կոտորվեցան: Սակայն ցավոք սրտի... այստեղ՝ Էջմիածնում, սովածությունից պիտի մեռնինք, դիմում ենք, մեզ չեն օգնիր, բոլորն էլ մերժում են, մեր հույսը ամեն կողմից կտրած Ձեզ ենք դիմում ու խնդրում, որ մեր խնդիրքը չմերժեք և ապրելու հնարավորություն տաք, մինչև որ կարողանանք մեր հայրենիք վերադառնալ»[47]: Այսպես, թիվ ու համար չունեցող գաղթականությունը, տարբեր կողմերից մերժված, Թումանյանից էր **«ապրելու, հայրենիք վերադառնալու հնարավորություն»** խնդրում: Եվ նա չգիտեր՝ որ մեկին հասներ, ում ցավը դարմաներ:

Որբերի ու գաղթականների խնդրանքներին ընդառաջ գնալիս Թումանյանը **խախտում էր եկեղեցու կողմից ընդունված կանոնները,** գործում էր միայն **խղճի ձայնով**: Արգելված էր ծնող կամ նույնիսկ ազգական ունեցող երեխաներին որբանոց ընդունել: Բանաստեղծն ընդունում էր՝ վստահ, որ մայրերը երեխաների խնամքից հրաժարվում էին՝ նրանց կյանքը փրկելու համար. անելանելի վիճակն էր ստիպում հարազատ երեխաներին թողնել որբանոցի դռանը: Բանաստեղծը վկայում է. «Մայրերը, իհրավի, բերում են հավատացնում են, որ որբ են, գտել են, հայր-մայր

44 Նույն տեղում:
45 Թումանյան, ԵԼԺ, հատ. 2, էջ 73:
46 ԹԹ,ՆՆ, թղթ 60:
47 Նույն տեղում:

չունեն, ու աղաչում են ներս ընդունել կիսանվազ երեխաներին. երեխան հաճախ կպչում է կնոջը – նանի կամ մարե ճչալով ու մատնելով մոր խաբեբայությունը»[48]: Մայրերից ոմանք էլ զավակներին «Դնում են մանկանոցի դռանն ու իրենք հեռանում կորչում»[49]: Այդ երեխաներից շատերը լաց էին լինում և չէին ցանկանում որբանոցում մնալ: Ոմանք էլ «մարե» ճչալով փախել են մանկանոցից: Մի անգամ մի հիվանդ երեխայի բերում են և թողնում որբանոցի դռանը: Բոլորը կարծում են, թե անգութ մարդկանց արարք է: Մինչդեռ Թումանյանը զգում է, որ երեխան անտեր չէ. «Մտածեցի, որ մայրը մոտիկ պիտի լինի – նայեցի չորս կողմը – ծառերից մեկի տակ թաքնված նայում էր մայրը...» [50]: Այդպես է վարվում նաև վանեցի մի վաճառական, որը, առանց խոսք ասելու, բերում է երեխային թողնում մանկատանն ու հեռանում: Այսպես Թումանյանը հայտնվում էր մայրերի ու նրանց զավակների միմյանց հակասող խնդրանքների խաչմերուկում և առաջնորդվում էր միայն երեխաներին փրկելու մղումով՝ անկախ այն բանից նա որբ է, թե ոչ: Ոմանք էլ իրենց երեխաներին բերում էին ներկայացնում որբեր: Երբ նրանց խուզում էին, լողացնում, կերակրում ու հագուստ տալիս, ետ էին վերցնում երեխաներին և ասում իբր կորցրել են[51]:

Ոչ միայն ծնողներն էին փորձում «խաբել» որբանոցի աշխատակիցներին, այլև բազմաթիվ ծանոթ-անծանոթներ, նույնիսկ հասարակական կազմակերպություններ անթաքույց խնդրում էին Թումանյանին՝ խախտել Էջմիածնի հոգևոր իշխանության սահմանած կարգը և որբանոց ընդունել ինչպես անտեր ու որբ, այնպես էլ ծնող ունեցող որոշ երեխաների: Այսպես՝ 1915 թ. օգոստոսի 6-ին Մատթեոս եպիսկոպոսը Վեհափառ հայրապետի բարձր հովանու ներքո գործող Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի անունից գրում է. «Պ. Հովհաննես Թումանյան: Այս երեխային ընդունեցեք որբանոցում, որն անտեր ընկած է անխնամ»[52]:

**Բարդուղիմեոս եպիսկոպոսի սեպտեմբերի 5-ի** նամակում կարդում ենք. «Մեծապատիվ պ. Հովի. Թումանյան, վանեցի Մարկոս անուն գրաբերիս կինը մեռավ երեկ, երկու փոքրիկները մնացին անխնամ: Ինքը աղքատ է՝ բառի իսկական նշանակությամբ: Խնդրում եմ սորա փոքրիկները ընդունեք Ձեր կառավարած որբանոցը: Ինքը ծառայում է ինձ մոտ»[53]: Իսկ Սահակ վարդապետը իր խնդրանքը ձևակերպում է այսպես. «Այն երեխան, որի համար խնդրեցի ընդունել որբերի կարգում՝ գրաբերս է. խնդրեմ չմերժել խնդիրս: Մտո մի շաբաթ է, որ դռանս նստած լաց է լինում յուր փոքրիկ քրոջ հետ հացի համար»[54]:

Ավելի հաճախ այդպիսի խնդրանքներով դիմում էին բանաստեղծին հիվանդանոցի բժիշկները՝ Պյուլպուլյանը, Համազասպ Օհանջանյանը, որոնք խնամում էին այդ երեխաների հիվանդ ու անօգնական ծնողներին,

48 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 408:
49 Նույն տեղում:
50 Նույն տեղում:
51 Տես նույն տեղում:
52 ԳԱԹ, ԹՓ, N 1674 (491):
53 ԹԹ, Նոր նյութեր, թղթ.32:
54 Նույն տեղում:

որոնցից շատերը ամեն օր մեռնում էին նրանց ձեռքերում: Մինչդեռ «Եղբայրական օգնություն» ընկերության ներկայացուցիչ Բաբկեն վարդապետը և այլք դժգոհում էին Թումանյանի այդ վարքագծից, սակայն պոետը չէր կարող անսալ նրանց կամքին և շարունակում էր ընդունել հաճախ նաև ծնողներ ունեցողներին: Այս մասին նույնպես վկայություն կա Թումանյանի օրագրում. «Արտ. Աբեղյանն ու Բաբկեն վարդապետը խոսում են, թե ինչու ես շատ ընդունում – թե մայրեր ունեն շատերը»[55]:

Էջմիածնում գնալով սաստկանում էր տրախոմա (աչքի վարակիչ հիվանդություն), տիֆ, սև ծաղիկ, դիզենտերիա, դիֆտերիա, խոլերա և այլ բազմաթիվ հիվանդությունների համաճարակը: Այս պայմաններում բանաստեղծը մի գերխնդիր էլ ուներ, համոզել մարդկանց, կարող ուժերին, որ մնան Էջմիածին-մահաստանում և օգնեն գաղթականներին: Շատերը խնդրում էին իրենց ազատել աշխատանքից, չպահանջել անձնազոհություն, որին պատրաստ չէին: Այսպես, օրինակ՝ օգոստոսի 30-ին շատախցի ուսուցիչներ Սահակ Մարտիրոսյանը և Մարգար Ավետիսյանը հայտնում են բանաստեղծին Էջմիածինը թողնելու իրենց որոշման մասին և խնդրում են հանձնարարական տալ, որպեսզի Երևանում կարողանան աշխատանք գտնել: Նրանց գրության մեջ ասվում էր. «Հարգելի պ. Թումանյան: Այստեղ հիվանդությունները մեծ ծավալ են ստացել. այնպես որ, այս միջավայրի մեջ գործելը կասկածելի է և միանգամայն վնասակար, որովհետև մեր առողջությունն էլ կարող ենք վրա տալ»[56]: Ինչ խոսք, որևէ մեկին մեղադրել հնարավոր չէր: Թումանյանը ինքն է վկայում, որ որբանոցի 200-ից ավելի ծառայողներից 20-30 հոգի հազիվ են խուսափել վարակից, իսկ մի քանիսն էլ մահացել են[57]: Այդ պահին յուրաքանչյուր հայի ներկան էր ողբերգական, իսկ ապագան՝ խիստ անորոշ:

Ոմանք էլ պարզապես ուզում էին վարձատրվող աշխատանք և որոշ երաշխիքներ՝ գոյությունը պահպանելու համար և կարծում էին, որ բանաստեղծից է կախված իրենց ճակատագրի տնօրինումը: Շատախեցի հինգ ուսուցիչներ աշխատում էին որբանոցում՝ ակնկալելով բավարար վարձատրություն, սակայն զգալով ընդհանուր վիճակի անորոշությունը՝ որոշում են հեռանալ Էջմիածնից և այդ մասին 1915 օգոստոսի 5-ին գրավոր տեղեկացնում են.

« Հարգելի՛

Պ. Հովհաննես Թումանյան,

Մեր ժողովուրդը այս տեղեն կճամբվի. մեր դրությունը որբանոցի մեջ անորոշ է. եթե մեզ տնական և վարձատրվող աշխատանք պիտի հանձնեք հոս, պիտի մնանք, իսկ եթե ոչ, մեր ժողովուրդի հետ պիտի գնանք մեր բախտը որոնելու»[58]:

55 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 408:
56 ԹԹ, Նյութեր, թղթ. 32:
57 Տե՛ս **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 7, էջ 178:
58 ԳԱԹ, Թֆ, N 1897 (175, 3-րդ ց.)

## 4. Էջմիածինը Թումանյանի գրառումներում

1915 թ. ահազարհուր եղեռնից հետո Թումանյանի համար Էջմիածինը դարձավ «ողբի ու որբի հայրենիքի» խորհրդանիշ: Այստեղ նա վանեցիներից լսում ու գրի է առնում նահանջի զարհուրելի դրվագներ ու մանրամասներ: «Էնքան է մեծ եղել տագնապը,– հավաստում է պոետը,– որ բոլորն իրենց կորցրել են – խմբեր, խմբապետեր... մի 20 քրդի հրացանաձգությամբ Բերկրիի կամուրջի մոտ, ձորում առաջ է բերել ահագին խուճապ, իսկ ռուսական զորքը–շատերը հրացանները ձգել են փախել–շատերն էլ միայն թալանով են եղել զբաղված: Վանից դեռ դուրս չեկած զինվորները, կոզակները տներն են մտնում թալանելու, նույնիսկ Արամի»[59]:

Գրողի օրագրում հանդիպում ենք նաև ռուսների խուճապի ու անմարդկային արարքների մանրամասների. «Վիրավոր օֆիցերին ձգել են կամուրջից գետը: Թուրքերը հանել են– վերքերը կապել, ղրկել ռուսներին ու տեղեկացրել, թե ռուս զինվորները գցեցին գետը... Ղարայի կոմենդանտը, որ շարունակ զինաթափ էր անում հայերին և խլել էր 200–ից ավելի զենք (ծախել քրդերին), մեկինն էլ խլելիս, երբ տեսնում է՝ ընդդիմանում է՝ թե կասեմ զինվորի վրա հրացան ես արձակել, գնդակահար անել կտամ:

Ռուսների խուճապը էնքան է մեծ լինում և գլխակորույս, որ մի ռոտայի 4 թնդանոթ չեն իմացնում– մնում են (Փանչի)»[60]:

Թումանյանը անմիջապես դիմում է հայ կանանց ու աղջիկներին, որ դառնան գթության քույրեր և գան Էջմիածին: Այդ խնդրանքով դիմում է նաև Ազգային բյուրոյին: Բանաստեղծը գրում է. «Թող այս երեխաների մանկական աղերսը լսեն մեր սրտացավ տիկնայք, օրիորդները և հայ կանանց հասարակական կազմակերպությունները: Ցանկալի է, որ նրանք անհապաղ և ամեն տեղ կազմակերպեն մի առանձին կոմիտե և ուղարկեն Էջմիածին»[61]: 1915 թ. հուլիսի 30–ին նա Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեին ներկայացնում է քաղաքում տիրող սոսկալի իրավիճակը. «Հարյուր հազարավոր փախստականներ են գալիս Թուրքիայից Իգդիրի վրայով Էջմիածին: Առայժմ վերջը չի տեսնվում շարան–շարան եկող այդ մասսայի, որը շարժվում է բարձրացած փոշու մեջ: Մեծամասնությունը կանայք և երեխաներ են, ուժից ընկած, հոգնած, սոված, բոբիկ: Նրանց պատմածները քրդերի և թուրքերի գազանությունների մասին լի են աննկարագրելի սոսկումով»[62]: Նույն զեկույցի մեջ տեղեկացնում է, որ մոտավորապես 500 որբ ու անտեր երեխա է հասել Իգդիր և Էջմիածին, քանի որ «փախուստին առիթ տվող պանիկան ընկել է անսպասելի կերպով, այս պատճառով ծնողները կորցնում էին իրենց երեխաներին, երե–

---

59 Խոսքը վերաբերում է դաշնակցական գործիչ Արամ Մանուկյանին՝ Հովհաննիսյան Սարգիս (1879, Շուշի–29. 01. 1919 Երևան), որ 1905–ից հաստատվել էր Վանում: Եղեռնի օրերին ղեկավարել է Վանի ինքնապաշտպանությունը և 1915 թ. մայիսից եղել է Վանի ու նրա շրջակայքի նահանգապետը, 1916–1917 թթ աշխատել է Թումանյանի հետ Թիֆլիսի Ազգային բյուրոյում, 1917ից տեղափոխվել Երևան և դարձել Հայաստանի առաջին հանրապետության ներքին գործերի նախարար: Մեջբերվող հատվածը խորհրդային գրաքննությունը արգելել էր տպագրել:

60 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 406–407:

61 Նույն տեղում, հատ. 10, էջ 227:

62 Նույն տեղում, էջ 227:

խաները՝ իրենց ծնողներին: Ծնողներին կորցրած շատ երեխաներ սովածությունից ու հոգնածությունից ուժ չունենալով ճանապարհին հետ էին մնում և մեռնում, եթե չէին վերցնում նրանց ուրիշները»[63] :

Միաժամանակ կոչ է անում հասարակական կազմակերպություններին, հայ բոլոր սրտացավ կանանց ու աղջիկներն լսել երեխաների մանկական աղերսը և անհապաղ շտապել Էջմիածին՝ սրտագին ջերմությամբ ու կանացի հոգատարությամբ շրջապատելու փոքրահասակ դժբախտ զոհերին:

Ոչ միայն կանանց, այլև ողջ հայությանն ուղղված օգնության այդ կոչը գրողը Թիֆլիս էր ուղարկել Կովկասի հայոց բարեգործական ընկերության և փախստականներին օգնող հայ կենտրոնական կոմիտեի նախագահ Սամսոն Հարությունյանի հետ: Վերջինիս հետ միասին նույն բովանդակությամբ հատուկ հեռագրով [64] հուլիսի 30-ին դիմում է «Մեղու» աշխատանքի տան Թիֆլիսահայ կանանց վարչությանը, որի պատասխանում ասվում էր. ««Մեղու» Աշխատանքի տան վարչությունը ստացել է Ձեր 30/7-րդ/ 1915-ի հեռագիրը .... «Մեղու» Աշխատանքի տան վարչությունը..., պիտի փութար, անշուշտ, արձագանք տալու Ձեր կոչին» [65]:

Հայոց բարեգործական ընկերության վարչությունը 1915 օգոստոսի 30-ին զեկուցում էր բանաստեղծին ձեռնարկած գործողությունների մասին. «Մեծարգո պ. պ. Ս.Հարությունյան և Հ. Թումանյան, օգոստոսի առաջին կեսին Կովկասի հայոց բարեգործական ընկերության և փախստականներին օգնող հայ կենտրոնական կոմիտեն արդեն կազմակերպել էր խմբեր՝ Իգդիր, Էջմիածին և Դիլիջան գործուղելու համար»[66]:

Օգոստոսի կեսերից դրությունն ինչ-որ չափով բարելավվում է, հատկապես երբ բացվում է բուժարան (ամբուլատորիա), 5 հիվանդանոց՝ 500 մահճակալով և որբանոց՝ 3000 երեխայի համար: Երեխաները ստանում էին օրական ընդամենը 800 գրամ ալյուր և տաք կերակուր: Այդ օրերին Թումանյանը հանդիպում է Էջմիածին եկած Բաքվի Բարեգործական ընկերության ներկայացուցիչներին, որոնք իրենց հետ բերել էին մեծ քանակությամբ հագուստեղեն, ամանեղեն, մթերք:

Թումանյանի կոչի արձագանքողներից մեկն էլ գրողի դուստրն էր՝ Նվարդը: 1915 թ. Թիֆլիսում գործում էր «Հայ օրիորդների կոմիտեն», որի ակտիվ անդամներից էր Նվարդը: Թումանյանի դիմումը կանանց ու աղջիկներին՝ օգնության հասնելու հայ որբերին, վերաբերում էր նախ և առաջ «Հայ օրիորդների կոմիտեին» և առաջին հերթին իր դստերը՝ Նվարդին: Բանաստեղծն իր անձնական օրինակով էր փորձում համոզել թե՛ իր զավակներին, թե՛ հանրությանը գաղթականների ու որբերի խնամքի հույժ կարևորությունը: Նա անհանգստանում էր դստեր ուշանալու պատճառով և շտապեցնում: Եվ բանաստեղծի սիրելի դուստրը չի հիասթափեցնում հայրիկին, առաջինն է արձագանքում հայրիկի կոչին և կամովին

63 Նույն տեղում:

64 Հեռագիրը չի պահպանվել, սակայն բովանդակությունը պարզ է դառնում «Մեղու» աշխատանքի տան Թիֆլիսահայ կանանց վարչության պաշտոնական գրությունից (տե՛ս ԳԱԹ, Թֆ, N 1728 ): Արձագանքներից պարզվում է, որ նույն բովանդակությամբ հեռագրեր բանաստեղծն ուղղել է ոչ միայն Ազգային բյուրոյին, այլև առանձին ընկերությունների ու կազմակերպությունների՝ աշխատելով համախմբել հնարավոր բոլոր ուժերը համազգային աղետի կանխարգելման համար:

65 ԳԱԹ, Թֆ, N 1728:

66 «Հորիզոն», Թիֆլիս, 1915, օգոստոսի 9, 14, N 178,182 :

ու սրտացավությամբ հայտնվում է Էջմիածնի դժոխքում: Ոչ միայն մեր, այլև համաշխարհային պատմության մեջ քիչ չեն անձնազոհ ու հայրենասեր գործիչներն ու անհատները, որ կամովին նահատակության են գնացել, հանուն հայրենիքի մղվել են վտանգին ընդառաջ՝ առանց երերալու, սակայն հազվադեպ են այնպիսի անհատները, որ հայրենիքի զոհասեղանին են դրել իրենց երեխաների կյանքը: Թումանյանը այդ բացառիկներից էր:

Նվարդի հետ Էջմիածին գնացին երեք ընկերուհիներ, որոնց անունները հրապարակված էին «Հորիզոնի»՝ 1915 թ. օգոստոսի 9-ի հայտարարության մեջ. «Հայկական կենտրոնական կոմիտեն» Էջմիածին ուղարկեց օր.օր. Ն. Թումանյանին, Ա. Դանիելյանին, Հ. Ջորյանին և Կ. Լիանոզյանին, որոնք սիրահոժար և ինքնակամ հանձն են առել առանց վարձատրության գործել փախստականների կարիքները հոգալու համար»[67]: Էջմիածնում Նվարդի հետ աշխատող կամավորներից են եղել նաև երիտասարդ տղաներ Ա. Բարխուդարյանը, Լ. Աճեմյանը, Լ. Լիսիցյանը: 5 օր անց՝ օգոստոսի 14-ին, «Հորիզոնում» հայտնվում է Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեի մեկ այլ հայտարարություն, ըստ որի՝ Նվարդը՝ իբրև գաղթականներին օգնող խմբի ղեկավար, պետք է մեկներ Իգդիր: Հայտարարության մեջ ասվում էր. «Հայկական կենտրոնական կոմիտեն կազմակերպել է 3 խումբ: Առաջին խումբը՝ բաղկացած 6 հոգուց, որ գործելու է Իգդիրում, կազմված հայ օրիորդների կոմիտեի ներկայացուցիչներից, ղեկավարությամբ օր. Ն. Թումանյան... Երկրորդ խումբը Էջմիածնում՝ օր. Քափանակյանի ղեկավարությամբ, երրորդ խումբը Դիլիջան՝ բժ. Եազմաճյանի և բժ. Թումանյանի առաջնորդությամբ»[68]: Այս լուրը լրագրի միջոցով հասնում է Դիադինում ծառայող բանաստեղծի ավագ որդուն՝ Մուշեղին, որը օգոստոսի 31-ին քրոջը պատմում է, թե ինչպիսի ոգևորությամբ է այն ընդունվել զինվորականների կողմից: «Նվարդ ջան,- հարցնում է նա,- ...էդ մանկանոցը ի՞նչ դրության մեջ է, ինձ չորս կողմից են հարցնում՝ ճեմարանի մանկանոցի անկարգության և կեղտոտության մասին. բա ձեր օրիորդաց ընկերությունը չի՞ կարող մի բանով օգնել: Էստեղ զորամասերում հատուկ մի հեռագիր կարդացին, որտեղ գրված էր, որ Թիֆլիսի օրիորդաց ընկերության կողմից Էջմիածին են գնացել մի խումբ օրիորդներ, որ Նվարդ Թումանյանի ղեկավարությամբ է գործելու, չգիտեմ ճի՞շտ է, բայց զինվորները 4-5 անգամ «ուռամա էին գոռում»»[69]: Գրողի զավակները հետևում էին հոր օրինակին և չէին խնայում ոչ միայն իրենց կյանքը՝ կռվելով հայ ժողովրդի ապագայի համար ռազմաճակատի տարբեր մասերում, այլև հարազատների՝ մերձավորների կյանքը, ինչպես որ Մուշեղը չի խնայում քրոջը՝ այդպիսի պահանջ դնելով[70]:

Բանաստեղծը և նրա դուստրը ապրում էին Էջմիածնի մատենադարա-

67 «Հորիզոն», Թիֆլիս, 1915, N 178, օգոստոսի 9, էջ 3:

68 Նույն տեղում, N 182, օգոստոսի 14, էջ 3:

69 Թումանյանի ընտանիքի նամականին, էջ 7273:

70 Ըստ ամենայնի՝ Նվարդը խնդրել էր իրեն Իգդիր ուղարկելու փոխարեն թույլ տալ մնալ Էջմիածնում, որտեղ դրությունն առավել ծանր էր: Բացի այդ՝ նրա համար չափազանց կարևոր էր շարունակել մնալ հայրիկի կողքին՝ Էջմիածնում, ուր որբերին խնամելուց զատ կարող էր հոգ տանել վատառողջ հոր մասին:

նի շենքի առաջին հարկում, որի երկրորդ հարկի սենյակը զբաղեցրել էր կաթողիկոսի տեղապահ Հուսիկ արքեպիսկոպոսը [71]: Թեև ուշ ժամերին՝ բոլոր աշխատակիցների ճաշելուց հետո, բանաստեղծը դստեր հետ գնում էր ճաշարան և վայելում էր ճաշարանի աշխատակից Լևոն Բակլաչևի հատուկ ուշադրությունը, սակայն ոչինչ չէր ուտում, ինչպես վկայում է դուստրը. «Ինքը ոչինչ չէր կարողանում ուտել, ո՛չ ժամանակ կար, ո՛չ էլ ախորժակ, միակ բանը թեյն էր և սուրճը, որ կոնյակով օրը մի քանի անգամ խմում էր զանազան հիվանդությունների առաջն առնելու համար»[72]: Իսկ գնում էր ճաշարան, որպեսզի դուստրը այդքան հոգսերից ու ծանր աշխատանքից հետո սոված չմնա:

Գրողը ձգտում էր հատկապես Էջմիածնում ապրող կանանց ու աղջիկներին ներգրավել որբախնամ գործին: Նվարդ Եգիբյանը (Բաղդասարյան) և նրա քույրը, ոգևորված գրողի ներկայությունից, անմիջապես անցնում են աշխատանքի՝ հետագայում խոստովանելով. «Ում որ մոտենում էր Թումանյանը... ամենքը խոր հարգանքով, հաճույքով լսում ու պատասխանում էին բանաստեղծին....Պարզ երևում էր, որ նա բոլոր նախաձեռնությունների շունչն ու ոգին էր, մարդ, որի կենդանի օրինակը ոգևորում էր շատերին և մեզ»[73]:

Թումանյանը գուրգուրանքով էր շրջապատում իր կյանքը վտանգի ենթարկած յուրաքանչյուր գթության քրոջ[74]: Շատերը, եթե ոչ բոլորը, պատիվ էին համարում Թումանյանի ղեկավարությամբ աշխատելը: Ինչպես գրում է Ն. Բաղդասարյանը. «Ես երջանիկ եմ զգում, որ առիթ եմ ունեցել աշխատելու նրա ձեռքի տակ»[75]:

Գրողը հիանում ու հպարտանում էր հայ կանանց ու աղջիկների՝ այդ օրերի անձնազոհ աշխատանքով, «խելագար անձնվիրումով»: Այդ մասին նա Թիֆլիս հասնելուց մեկ ամիս անց գրում էր. «Աղետալի գաղթականությունը... շատ բաների հետ հանդես բերավ և մի երևույթ, թե ինչ խելագար անձնվիրության է ընդունակ հայ կինը, հայ աղջիկը: Էջմիածնում գրեթե ամեն գործի մեջ ամենից առաջ հարկավոր էր սիրտ, սրտալի վերաբերմունք, բայց անհրաժեշտ է մանավանդ Մանուկների ապաստարանում, որ միշտ Որբանոց կոչվեց:

Ահա էստեղ էր մի քանի հազար կեղտոտ, մերկ, սովալլուկ ու հիվանդ երեխաների մեջ էր, որ հայտնվեցին նրանք, և թե ինչ էին անում էդ որբանոցի մեջն ու շուրջը, ամեն տեսնելիս հուզմունքից կուլ էի տալիս արտասուքներս և երբե՛ք, երբե՛ք չեմ մոռանալու ահռելի աղետի մեջ՝ սովի, տիֆի, խոլերայի և ամեն տեսակ ցավի ու տանջանքի դեմ երես-երեսի

71 Հուսիկ արքեպիսկոպոսը ամեն օր ծաղիկներ էր նվիրում Նվարդին: Նրա համառության ու ջանքերի շնորհիվ ապահովվում է Թումանյանի նախաճաշը՝ լոլիկով և «սուխարիկներով» ձվածեղը, որը պռետը պատրաստում էր անձամբ: Նվարդը վկայում է. որ Հուսիկ սրբազանը «Ամեն առավոտ ափսեով պոմիդոր էր ուղարկում հայրիկի համար, հետո էլ կարմիր վարդեր. պոմիդորը՝ բանաստեղծին, վարդերը՝ աղջկան» (**Նվարդ Թումանյան**, Հուշեր և զրույցներ, էջ 124):

72 **Նվարդ Թումանյան**, Հուշեր և զրույցներ, էջ 124:

73 Նույն տեղում:

74 Նա գիտեր, որ այդ պահին «Էջմիածնում գրեթե ամեն գործի մեջ հարկավոր էր սիրտ, սրտալի վերաբերմունք, բայց անհրաժեշտ էր մանավանդ Մանուկների ապաստարանում» (**Թումանյան**, ԵԼԺ, հատ. 7, էջ 178): Բանաստեղծը հաճախ մտնում էր ճաշարան, որ հիշեցներ. «Օրիորդների մասին հոգու՞մ եք, թե՞ սպասում եք, որ իրենք գան, չէ՞ որ առավոտից գիշեր աշխատում են» (ԹԺՀ, 686):

75 ԹԺՀ, 686:

կռվի դուրս ելած էդ չքնաղ մարտիկներին»[76]:

Պոետի գրառումներում հանդիպում են թե որբերի, թե նրանց խնամողների, մասնավորապես գթության քույրերի անուններ, որոնց նա աշխատավարձ էր տալիս, թեև նրանց զգալի մասը եկել էին կամավոր ու անվճար օգնելու որբերին: Այդպիսի մի գրության մեջ կարդում ենք. «1. Օհան Ավետիսյան՝ 2, Պողոս Մելքոնյան՝ 3, Մինաս Ալեքսանյան՝ 4, Կարապետ Պողոսյան՝ 5, Մատթեոս՝ 6. Լևոն՝ 7, Սիմոն Միւրադյանին, օրիորդ Վարդին – 20 ռուբլի, օրիորդ Ազնիվ Մալխասյանին՝ 10ռ.»[77]:

Էջմիածնում գրողի օրագրային նշումները **եղեռնի զարհուրելի տեսարանների վկայագրերն են**: 1915 թ. օգոստոսի 8-ին բանաստեղծը գրում էր. «Անկարելի է նկարագրել, թե ինչ զարհուրելի աղետ է, որին ականատես եմ ես: Բոլոր ճանապարհները, բոլոր շինությունները, բոլոր բնակությունների շուրջը, հանդերը լիքն են մերկերով, քաղցածներով, հիվանդներով, լացողներով, տնքացողներով, մեռնողներով: Երեխանե՛ր, երեխանե՛ր, երեխանե՛ր... անտեր, սոված, հիվանդ...Այժմ էլ ինձ է վիճակվել էդ երեխաների խնամատարության գործը»[78]: Թումանյանի վրա առավել ծանր էին ազդում երեխաների սոսկալի վիճակն ու մահը. «Սաստի՛կ, սաստի՛կ ծանր էր նրանց հետ խոսելն ու խոսեցնելը... Եթե խոսել ու խոսեցրել եմ, էն էլ շատ քիչ, պատահմունքով... Սակայն շարունակ աչքիս առաջն է նրանց բազմությունը, նրանց վտիտ, քաղցած ու մերկ բազմությունը... Համատարած խուլ աղմուկի ու իրարանցման մեջ ամեն կողմից առաջ են հրում անթիվ, անհամար կմախքներ, կմախքներ, որ դեռ շնչում էին...»[79]:

Էջմիածնում կատարած գրառումներից մեկում պոետը գրում է. «Կուբերը կամ վառած չեն կամ տարել են պադվալում դրել: Կերակուրի համար ամենից առաջ ամաններ են հարկավոր-էդ էլ հոգևորների ձեռքին չի, մթերանոցը դրած է. Հիվանդանոցին կից – բժիշկները միշտ էնտեղ են էնտեղ էլ լիքն են և ամանեղեն, և գտալներ այնինչ հիվանդներն էլ, առողջներն էլ փայտի ամաններով կամ կոնսերվայի ժեշտի ամաններով են կերակուր առնում (ով որ հասնում է) և մատով լպստում կամ փետի կտոր են կոխում մեջն ու լիզում»[80]: Ամենից հրատապը դիզենտերիայի կանխումն էր: Գրառումներից մեկում բանաստեղծը նշում է. «Ամեն ժողովին խնդիր է լինում, թե ջուրը վարակված է, եռացրած ջուր պիտի տալ և կուբերը չկան ու չկան, հացը խմոր է, նպաստում է դիզինտերիային և մնում է միշտ խմոր»[81]:

Բացի որբերի՝ հետագայում գրողի ժամանակակիցների գրած հուշերից՝ Թումանյանը նույնպես վկայում է, որ իրեն **հայրիկ էին** կանչում. «Երեխաներից ոմանք այնպես են սովորել, – գրում է բանաստեղծը, – որ ճաշից հետո էլ փեշերս բռնում են – հայրի՛կ, ես որբ եմ, խեղճ եմ, նա հեր ունի, նա մեր... Որ ասում էի՝ նոր շորեր պիտի կարենք ձեզ համար – ինչպես էստեղից-էնտեղից գլուխ էին բարձրացնում – Հայրի՛կ, ինձ համար

76 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 7, էջ 178:
77 ԹԹ, Նոր նյութեր, թղթապանակ 32:
78 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 10, էջ 228:
79 Նույն տեղում, հատ. 7, էջ 180:
80 ԹԹ, Նոր նյութեր, թղթապանակ 32:
81 ԹԹ, Նոր նյութեր, թղթապանակ 32:

կարմիր հալավ կարեցեք»[82]: Երբ երեխաներից մեկը լաց էր լինում, նրան հետևում էին մյուսները, սակայն լինում էին նաև այդ ամենին հանդարտ նայող երեխաներ. որոնք շարունակում էին ուտել, իսկ «ոմանք էլ փիլիսոփայորեն մտածում են լուռ»[83]:

Որբերի խոստովանությամբ Թումանյանը միակն էր, որի հետ հանդիպումները «գունեղ» էին, իսկ նա «լուսավոր տեսիլքի բնույթ»[84] ուներ և «երազային քաղցրությամբ» թափանցում էր յուրաքանչյուր երեխայի ներաշխարհ, համակում նրանց մանկական էությունը: Բանաստեղծն անձամբ էր զբաղվում այդ երեխաներին կերակրելու, լողացնելու, հագցնելու, եռացրած ջուրն ապահովելու, նրանց մազերը խուզելու հարցերով: Երեխաներից շատերը բանաստեղծին թույլ չէին տալիս մազերը խուզել կամ նույնիսկ կտրել: Փոքրիկ մի աղջնակ ասել է. «Ես կերթամ, հալավս ալ կթողնիմ, ծամերս ի չեմ տար»[85]: Երեխան փախչում է: Երկու օր անց նրան գտնում են մոր կողքին ու նրա հետ մեռած: Մեկ ուրիշը՝ նույնպես «դողալով աղաչում» էր. «–Հալավս ալ կհանեմ ձեզ կուտամ, թողեք մայրիկիս երթամ» [86]: Խոսքն այն հագուստի՝ «հալավի» մասին է, որը որբանոցն էր տվել երեխաներին: Ամեն օր, ամեն օր բանաստեղծի աչքի առաջ մեռնում էին երեխաներ: Ամենից սարսափելին նրա՛նց անթաղ դիակները տեսնելն էր: Ո՛չ կարող էր մոռանալ երբևէ, թե ինչ տեսավ. «Գանգի ներքևից մինչև ծնոտը (ոսկրը) դատարկ երեխան-որդը մեջը լիքը»[87], ո՛չ էլ այդ դիակի հարևանությամբ ականջին անվերջ հնչող որբերի ձայները. «Քեռի՜, մածուն տուր,...քեռի՜, ջուր տուր...»[88] :

Բանաստեղծը վկայում է, որ հուլիսի 28-ից մինչև սեպտեմբեր Էջմիածնում մահացել են 7000 գաղթական, որոնցից 3000-ը՝ երեխա: Նրանցից մեկի՝ Խաչատուրի մասին կարդում ենք նրա օրագրում: Պոետը նկարագրում է՝ ինչպես ծնողազուրկ եղբայրներից մեկը գլուխը դրել է մյուսի գոգին և քնած վիճակում մահացել: Թումանյանը մոտենում է, ողջ մնացած եղբայրը շտապում է ասել «Հայրներս Բերկրի զարկվեց – մարներս մեռավ – մենք որբ ենք, նա հեր ունե, նա մեր... -էս քու ախպե՛րն է. ուզեցինք վեր կացնել, մեռած էր – կանչեց, կանչեց – իրեն հեռացրինք»[89]: Աշխարհում միակ հարազատին կորցրած փոքրիկ երեխան կանչում է եղբորը՝ «Ծո Խաչո՜, Խաչո՜, և բանաստեղծը հազիվ է կարողանում հեռացնել նրան ու մխիթարանքի խոսքեր գտնել, իսկ աշխատակիցները ստիպված նաև խաբում են՝ հանգստացնելու համար. «Կգա՛, կգա՛, նրան էլ կբերենք»[90]:

Ամեն օր, ամեն ժամ գրողն Էջմիածնում ականատես էր սահմռկեցուցիչ տեսարանների, հիվանդությունների, համաճարակի, թաղումների հետ կապված բազմաթիվ խոչընդոտների: Եվ ինչ միայն չէր անում Թումանյանը Էջմիածնում. որբեր էր ընդունում ու խնամում, կազմակերպում նրանց

82 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 408-409:
83 Նույն տեղում, էջ 409:
84 ԹԺՀ, էջ 846:
85 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 409:
86 Նույն տեղում, էջ 408:
87 Նույն տեղում, էջ 409:
88 Նույն տեղում:
89 Նույն տեղում:
90 Նույն տեղում:

փոխադրումը մի վայրից մի ուրիշ վայր, մի որբանոցից մեկ այլ որբանոց, զբաղվում էր նրանց ուսման ու դաստիարակության, մոտ ու հեռու ապագայի, նրանց ողջ ու առողջ «Երկիր» վերադարձնելու, տիֆ, սև ծաղիկ, դիզենտերիա և այլ հիվանդություններին դիմագրավելու, դրանց դեմ պայքարի գործը կազմակերպելու, երեխաների ամենաանհրաժեշտ կարիքները հոգալու, նրանց եռացրած ջրով, հացով ապահովելու, իսկ որ ամենասարսափելին է՝ թաղման հարցերով: Նա հոգում էր անթաղ դիակների «միայն մի արշին» փոսը ավելի խորացնելու, դիակներ հավաքող ու թաղող բանվորների և նույնիսկ պատգարակների թիվը ավելացնելու մասին: Թումանյանն էր կազմում կամ հավաքում առողջ երեխաների ցուցակները և մտահոգվում վարակը կանխելու խնդրով, որոշում էր, թե համաճարակի զոհ դարձած երեխաներին ինչ միջոցներով պիտի թաղեին, տվյալ որբանոցի պաշտոնությա՞ն, թե՞ որբերի ընդհանուր միության... Նա էր կազմակերպում գաղթականներին հաց, սպիտակեղեն, կերակուր, ամաններ ու գդալներ բաժանելու գործը, անհրաժեշտ մթերքը ձեռք բերելու և պահեստավորելու խնդիրը: Հանկարծ բանաստեղծին է մոտենում սայլապանը (ֆուրգոնչին) և կտրուկ հայտարարում, որ ինքն այլևս մեռած մարդկանց չի հավաքի ու տեղափոխի, քանի որ եկեղեցու որբախնամ մարմինները և «Գլխավոր կարգադիր հանձնաժողովը» քիչ են վարձատրում, պատասխանատուներն էլ պատճառաբանում էին, թե «Ֆուրգունչին շատ է ուզում»: Չխորանալով վեճի մեջ՝ Թումանյանը շտապում է իր կացարանը և վերջին կոպեկները տալիս է սայլապանին, որպեսզի մեռելներն անթաղ չմնան: Առանց այդ էլ, ինչպես մեծ ցավով ծոցատետրում նշում է. «23-ից (1915 թ. օգոստոսի – Ս. Հ.) Էջմիածին 70 մեռել մնաց անթաղ, առաջին օրից էլ մի քանի տասնյակ կային, 24-ից ավելի շատ մնացին: Գետինը պինդ է և բանվորներ չեն գտնում: Երեք օր առաջվա դիակները արևի տակ ուռան – պատռեցին և գարշահոտություն տարածեցին»[91]:

Այն, որ այդ մեռելատար «ֆուրգոններին», այսինքն՝ թաղման գործին ամեն օր հետևում էր Թումանյանը, վկայում է նաև Գուրգեն Մահարին, որն Էջմիածնում հենց այդպիսի պահի է տեսել գրողին. «Ամեն առավոտ դագաղ-ֆուրգոնը շրջում էր գաղթականների մեջ և հավաքում էր մեռելներին: Ջորանոցային խոհանոց դիմող հում ու վատ մսով բեռնավորված ֆուրգոնների նման մեռելատար ֆուրգոնները առաջ էին շարժվում՝ «տեղ-տեղ կանգնելով: Եկավ Հ. Թումանյանը և շրջապատեց իրեն որբերով, ես նրան գիտեի, այդ նա է, որ գրել է «Մի կաթիլ մեղրը», «Շունն ու կատուն»: Նա հագել էր սպիտակ շորեր, դրել էր կեպի, կեռ քթով, սպիտակ ընչացքով, խաղաղ դեմքով կանգնեց նա, լուռ նայեց բոլորին, հետո նայեց հեռու և հեռացավ»[92]: Մեկ այլ ականատեսի հիշողության մեջ տպավորվել է, թե ինչպես է գրողը դստեր հետ միասին երեխաներին հավաքում և պատսպարում Գևորգյան ճեմարանի շենքում. «Բանաստեղծը վշտոտ հայացքով, վհատությամբ էր լցվել՝ տեսնելով այդ ցնցող պատկերները, քաղցի ու սովի կոտորածը»[93]:

91 **Թումանյան**, ԵԼԺ, հատ 8, էջ 410:
92 «Բանվոր» թերթ, Լենինական, 1930, ապրիլի 13, N 83, էջ 3:
93 «Գրական թերթ», 1939, ապրիլի 15, N 12, էջ 2:

Չկար որևէ հարց, որ նրա տնօրինությունից դուրս լիներ. ոմն Քրիստինե, որ հավանաբար որբերի համար սպիտակեղեն կամ հագուստ էր կարում, դիմում է պոետին. «Խնդրում եմ, որքան կարելի է շուտ, **կոճեր բերել տար,** ...կոճ չկա, սպիտակ, 50 համարի»[94]:

Սակայն Թումանյանի և առհասարակ մի մարդու ուժերից վեր էր ամեն օր այդ բազմաբնույթ ու բազմաթիվ հարցերը լուծելը:

## 5. Մշտաժպիտ բանաստեղծի արցունքները

**Ժամանակակիցների հուշերում** պահպանվել են մի քանի հուզիչ դրվագներ, որոնք ոչ միայն բացահայտում են այդ օրերին Էջմիածնում հայ ժողովրդի ողբերգության առօրեականությունը, այլև առավել ամբողջական են դարձնում մեծ մտածողի ու մարդու, գործչի ու բանաստեղծի մարդկային կերպարը: Էջմիածնում Թումանյանը մարդկային իրարանցման ու խառնաշփոթի մեջ իրեն չէր կորցնում, կազմակերպված էր ու եռանդուն. կարգադրություններ էր անում, հրամայում, մեկին ժպտում էր, մյուսին կշտամբում, երրորդին՝ խորհուրդներ տալիս: Ականատեսի խոսքերով՝ տեղից տեղ, վրանից վրան, մարդկանց մի խմբից մյուսը «մի մեռնողից դեպի ուրիշ մեռնողը» անցնում էր մի բարձրահասակ, շատ նիհար, ալեհեր «ժպտուն, ոչ խորը, բայց իմաստուն աչքերով»[95] մի մարդ:

Առհասարակ մշտաժպիտ Թումանյանի դեմքից գրեթե անհետացել էր ժպիտը: Մինչդեռ նրան ճանաչողները, իսկ նրան ճանաչում էին բոլորը, ցանկանում էին պոետի աչքերում միայն լավատեսություն ու հույս տեսնել և ցնցվում էին ժպիտի փոխարեն արցունք տեսնելով: Գթության քույրերից **Նվարդ Եգիբյանը,** անցնելով դիակների սայլի կողքով, նկատում է բանաստեղծին՝ աչքերում արցունքներ: Դիասայլերը այնքան սովորական էին Էջմիածին-մահաստանում, որ Նվարդը գուցե և չարտասվեր, եթե չտեսներ Թումանյանին այնտեղ կանգնած՝ արցունքն աչքերում. «Մի առավոտ,... տեսա մի սայլ, որի վրա բարձում էին մեռածների դիակներ՝ ոտքերից և ուսերից բռնած... մի հոգևորականի հետ կանգնած էր Թումանյանը՝ հուզված ու գլխիկոր... նա այնքան հուզված էր, որ անգամ չնկատեց ինձ... Ականջիս հասան նրա արտասանած բառերը. «Խեղճ, թշվառ ժողովուրդ, ո՜ր մեղքիդ համար»: Այս բառերի մեջ այնքան վիշտ ու կսկիծ էր ամբարված, որ գրիչն անզոր է արտահայտել... Նա բարձրացրեց գլուխը, նրա աչքերում սառել էին արցունքները, ինչպես հոր աչքերում, որ կորցնում է իր միակ որդուն, հարազատ զավակին... Կուտակված արցունքը, որ զսպում էի ուժերիս ամբողջական լարումով, քանդեց զսպող պատնեշը, և անզուսպ հեկեկանքը հորդեց...»[96]: Հուզված ու տառապանքից գլխիկոր բանաստեղծը ստիպված էր զսպել իր աչքերում հայոց վշտի պոռթկումը և մխիթարանքի խոսքեր գտնել իր արցունքներից անզուսպ հեկեկացող երիտասարդ աղջկա համար, սրբել նրա արցունքները և հայրական քնքշանքով շոյել նրա գլուխը. «Մի՛ լար, աղջիկս, լավ է, որ այստեղ են մեռնում, և հայրենի հողում են գերեզման գտնում, հապա... այն անգերեզման թշվառները....որ

94 ԹԹ, Նոր նյութեր, թղթ. 32:
95 ԹԺՀ, էջ 136:
96 Նույն տեղում, էջ 684:

գիշատիչների ճարակ են դառնում... -Ասաց ու ձախ ձեռքի բութ մատով հեռացրեց արցունքի շիթերն իր ակնակալներից, ապա ...ավելացրեց.- Աշխատենք, որ սրանց թիվը քիչ լինի»[97] :

## 6. Փրկված մի կյանք

Վաղարշապատի որբանոցում 1915-1918 թթ. աշխատած գթության քույրերից մեկը, որի անունը գրավոր աղբյուրներում չի պահպանվել, պատմում է, որ ամեն օր գթության քույրերից մեկի ու որբանոցի խորհրդի մի ներկայացուցչի հետ եզներով լծված սայլով քաղաքի փողոցներում և նրա մերձակայքում որբ, սովահար, տիֆով հիվանդ երեխաների էին փնտրում ու որբանոց տեղափոխում. «Երբ գտնում էինք մի հիվանդ կամ սովահար երեխա, ես մեքենայով գլուխը խուզում էի, դնում սայլի մեջ, ու բերում էինք որբանոց... Այդ օրն ինձ հետ էր Հովհաննես Թումանյանը... Մի արտի մոտով անցնելիս նա սայլապանին խնդրեց, որ կանգնի, ու ինձ ցույց տվեց արտի մեջ: Նայեցի, իրոք, կարծես երեխա կար: Գնացի: Կմախքացած երեխա էր,... հյուծված էր, մահվան մոտ: Մեքենան ձեռքիս մոտեցա, որ գլուխը խուզեմ, ու սարսափեցի: Ամբողջ ոջիլ էր՝ մազերին, հագուստին: Վխտում էին: Ազատ տեղ չկար: Այնպիսի զզվանք զգացի, որ ետ դարձա սայլի մոտ: Թումանյանը հարցական նայեց:

– Չեմ կարող, պարո՛ն Թումանյան, անհնար է:

...Թումանյանը թե՝

– Հա՛, հասկանում եմ: Տուր մեքենան:

Առավ ու մտավ արտը: Խուզեց երեխայի գլուխը, հետո գրկեց, բերեց դրեց սայլի մեջ»[98]: Այդ պահին բանաստեղծը փրկեց ևս մի հայ մանկան կյանք՝ նախ նկատելով նրան, ապա որբանոց տեղափոխելով:

Նույն օրերին գրողի հայրական հոգատարությունը զգաց, նրանից նվեր ստացավ այն ժամանակ դեռ 5-ամյա, հետագայում դերասանուհի Մայրանուշ Պարոնիկյանը[99]:

---

97 Նույն տեղում:

98 **Ռաֆայել Իշխանյան**, Իրական պատմություններ առանց գունազարդման, «Գարուն», Եր., 1986, էջ 73: Երբ Իշխանյանը, որ բառացի գրի էր առել գթության քրոջ այս հուշը, այդ մասին պատմում է բանաստեղծի կրտսեր դստերը՝ Թամար Թումանյանին, վերջինս ասում է. «Կարող եմ վկայել մի բան, որ «հայրիկը լավ մեքենա էր բանեցնում, ամառը բոլորիս շարում էր ու իր ձեռքով մեր գլուխները խուզում» (նույն տեղում):

99 Փոքրիկ աղջնակի հորը Վանից գաղթի նախօրյակին սպանել էին, և նա, մոր ձեռքը բռնած, 15 օր շարունակ բոբիկ ոտքերով քայլելով կամ իրենց կովի վրա նստած, հասել էր Վաղարշապատ: Իսկ երբ հաստատվում են Վաղարշապատի միաբանների երկհարկանի շենքի մերձակայքում, փոքրիկ աղջիկը իր ճաքճքած ու վերքերով լի ոտքերով ամեն օր գնում էր մոտակա աղբյուրը՝ ջրի, և հերթ կանգնում: Հենց այդ հերթում էլ նրա բոբիկ ոտքերը գրավում են բանաստեղծի ուշադրությունը: Մայրանուշ Պարոնիկյանը պատմում է. «Մի մարդ մոտեցավ: Նայեց ինձ, քրքրված շորերիս, ճաքճքած ու վերքոտ ոտքերիս: Հարցրեց, թե ինչու են ոտքերս այդ վիճակում: Ասացի՝ կոշիկ չունեմ: Հետո ինձ թղթե դրամ տվեց ու ասաց. -Միրդ կասես, որ սրանով քեզ համար կոշիկ առնի: Վազեցի մերոնց մոտ, դրամը տվեցի մորս ու պատմեցի եղածը: Հարցրին ո՞վ էր: Նայեցի աղբյուրի կողմը, տեսա այն մարդը դեռ այնտեղ էր: Ցույց տվեցի: Ասացին՝ Հովհաննես Թումանյանն է» (**Ռաֆայել Իշխանյան**, «Իրական պատմություններ առանց գունազարդման», «Գարուն», Եր., 1986, էջ 74):

## 7. Ամենայն Հայոց բանաստեղծը

Վաղուց արդեն Թումանյանի և կաթողիկոսի տարաձայնությունը գաղթականներին անձրևից պատսպարելու համար՝ Վեհարանի, թե Մայր տաճարի շենքում տեղավորելու պատմությունը ժողովրդական բանահյուսության նյութ է դարձել: Տեղատարափ անձրևից հակառակ հայրապետի, փախստականների գործով զբաղվող Բագրատ եպիսկոպոսի կարգադրության՝ Վեհարանում ու Մայր տաճարում գաղթականներին պատսպարելու մասին պատմությունը շարադրել են **Գրիգոր Վարդանյանն ու Վարդգես Ահարոնյանը, Աշոտ Պատմագրյանը, Նվարդ Թումանյանը** և այլք: Ասենք միայն, որ այդ օրվա՝ օգոստոսի 19-ի մանրամասները շարադրված են նաև բանաստեղծի էջմիածնի օրագրում[100]: Նրա վկայությամբ. «Մայր տաճարը դժվարացան – Գայանեն ու նոր Վեհարանը թողին»[101]:

«Հայրիկը զայրացած էր,– գրում է Նվարդը,– Հակառակ կաթողիկոսի արգելքին՝ նա գաղթականությանը տարավ դեպի նոր վեհարանի շենքը: Ուսանողները՝ **Լևոն Լիսիցյանը, Լյալյա Աճեմյանը, Ալեքսանդր Բարխուդարյանը ջահերով** (երկար փայտե ձողերի ծայրին աթար էին ամրացրել, վրան նավթ էին ածել ու վառել) գնում էին հայրիկի երկու կողմից և լուսավորում էին նրա ճանապարհը: Հայրիկը՝ թիկնոցի մեջ փաթաթված, տեղատարափ անձրևի տակ առաջ էր գնում, նրան հետևում էր հազարավոր գաղթականությունը իրենց կապոցներով, երեխաներով, նույնիսկ հարազատների դիակներով... Սարսափելի տեսարան էր...»[102]:

Բոլոր հուշագիրներն էլ միաբերան վստահեցնում են, որ տեղատարափ անձրևից գաղթականներին փրկել է Թումանյանը, կաթողիկոսի հանդիմանությանը հակադարձել է՝ իրեն հռչակելով **Ամենայն հայոց բանաստեղծ**[103]:

## 8. Հանդիպումները էջմիածնում

Էջմիածնում Թումանյանի գործունեությանն առնչվել են ու ականատես եղել հասարակական գործիչ **Գրիգոր Վարդանյանը** (հետագայում ՀՕԿ-ի նախագահ), **Վարդգես Ահարոնյանը**, էջմիածնի դիվանապետ, Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեի էջմիածնի ներկայացուցիչ **Բագրատ վարդապետ Վարդազարյանը**, Թումանյանի՝ Ներսիսյան դպրոցի դասընկերներից, էջմիածնի միաբաններից **Արսեն Ղլտճյանը, Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը**, միաբաններ **Գալուստ Տեր-Մկրտչյանը, Սահակ Ամատունին, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Աշոտ Աթանասյանը, Նիկողայոս Ադոնցը** և այլք: Շատերը միայն մեկերկու օր էին դիմանում էջմիածնում: Նրանց թվում էին **Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը** և մասնավորապես **Մարտիրոս Սարյանը**, որ էջմիածին էր եկել 1915 թ. սեպտեմբերին Մոսկվայից իբրև նորաստեղծ Հայ գաղթականների օգնության կոմիտեի ներկայացուցիչ. նա իր հետ բերել էր

---

100 Տես **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 410:

101 Նույն տեղում:

102 **Նվարդ Թումանյան**, Հուշեր և զրույցներ, էջ 126:

103 «Բագին», Պէյրութ, 1982, N 1, էջ 39: Տես նաև ԹԺՀ, էջ 137:

Մոսկվայի հայ գաղութի հանգանակությամբ հավաքված գումարը և դեղամիջոցներ: Նրա հետ էին Մոսկվայից ժամանած ռուսական թերթերի աշխատակիցներ, որոնք իջևանել էին ս. Գայանեի վանքում: Էջմիածնում տանտիրոջ իրավունքով անվանի մտավորականներին հյուրընկալում է **Գարեգին** վարդապետը: Սարյանի կենսագիրը՝ նրա թոռնուհի Ռուզան Սարյանը գրում է. «Այն, ինչ տեսավ Սարյանը ... Սուրբ Էջմիածնի պատերի ներքո, մարդկային վշտի ու տառապանքի իրականացած դժոխք էր: Արվեստագետի փխրուն ու մարդասեր հոգին խորապես ցնցվեց»[104]: Ինքը՝ Սարյանը, Էջմիածնում այդ օրերի իր ապրումների մասին գրում է.

«Քայլեցի: Աչքերս նորից մթնում էին: Գոռալ չէի կարողանում: Մշուշապատ հայացքիս առաջ մեկը մյուսի ետևից հատ – հատ երևացին տեսածս բոլոր սարսափները: Հետո խառնվեցին իրար ահագնացած խաժամուժի մեջ և սկսեցին խելագար վազքով պտտվել Շողակաթի, Հռիփսիմեի, Մայր տաճարի, Ջվարթնոցի շուրջը գնալով ավելի դաժան մոլեգնությամբ, ավելի դաժան խլրտոցով»[105]: Սարյանը հոգեկան մեծ ցնցում է ապրում, նրա զգայուն սիրտը չի դիմանում, և ընկերները գրեթե անգիտակից վիճակում նրան տանում են Թիֆլիս: Թերևս այդ անգիտակից վիճակը բարեբախտություն էր Սարյանի համար, քանի որ ամեն մի օր ու ժամ Էջմիածնում անցկացնելը յուրաքանչյուրի թե՛ առողջության և թե՛ կյանքի համար հղի էր մահացու վտանգով: Սարյանը շատ ավելի երիտասարդ էր ու առողջ, բայց սիրտը չէր դիմանում, առհասարակ դժվար է պատկերացնել, թե ինչ սիրտ պիտի դիմանար, այն էլ արվեստագետի, որը սովորական սրտերից ավելի զգայուն է: **Մինչդեռ ազգային վշտից ծերացած ու վատառողջ Թումանյանի սիրտը դիմանում էր, որովհետև եթե նրա սիրտն էլ չդիմանար, ապա ո՛ւմ սիրտը պիտի դիմանար:** Դիմանալը դիմանում էր, բայց նրա մշտաժպիտ աչքերից անհետացել էր ժպիտը, և որքան էլ ջանում էր հույսով ու հավատով լի երևալ, չէր կարողանում: Սարյանի խոսքերով՝ Թումանյանը Էջմիածնում «... փխատությամբ էր լցվել՝ տեսնելով քաղցի և սովի կոտորածը»[106]: Եվ Սարյանը իր հոգու խաղաղությունը որոնեց արվեստում ու ծաղիկներ նկարելով՝ փորձեց հաղթել դժոխային տեսարանների սարսափներին...

Հայ գրողներից Թումանյանը միակն էր, որ այդ պահին Էջմիածնում ծավալել էր այդպիսի ազգանվեր գործունեություն: Գրողի զենքը գրիչն է, և գրողներից շատերը զայրացած, վշտացած ու նաև շփոթված՝ փորձում էին առանձնանալ ու հեռանալ՝ այդ ամենը չտեսնելու համար, ոմանք էլ իրենց գրական գործունեությամբ էին արձագանքում համազգային աղետին[107]:

---

104 **Ռուզան Սարյան**, Մարտիրոս Սարյանի նամականին, ատենախոսություն, Եր., 2013, էջ 26:

105 **Սարյան Մ.**, Գրառումներ իմ կյանքից, Եր., 1966, էջ 153:

106 **Սարյան Մ.**, Հիշողություններ Հովհ.Թումանյանի մասին, «Գրական թերթ», Եր., 1939, ապրիլի 15, N 12, էջ 2: Նամակներ, հատ. 1, Եր., 2002, էջ 192:

107 Վահան Տերյանը 1915 թ. Վանի նահանջից հետո, որոշել էր պոեմ գրել Վանի հերոսամարտի և նրան հաջորդած ողբերգական դեպքերի մասին: Տերյանի արխիվում այսօր էլ պահպանվում են Երևանի որբանոցի սաների շարադրությունները: Կատարվածը Տերյանը բնորոշում էր համազգային աղետ, իսկ ռազմական գործողությունների տրամաբանությունը՝ դավաճանություն հայ ժողովրդի նկատմամբ: Տե՛ս **Ջորյան**, Հուշերի գիրք, Եր.,1958, էջ 206: Այդ օրերի արձագանքն է «Հայրենիքում իմ արնաներկ» բանաստեղծությունը:

## 9.Վերջին շաբաթները Էջմիածնի դժոխքում

Օգոստոսի 29-ին Թումանյանը Նվարդի հետ կառքով գնում է Երևան՝ Էջմիածնի մանկատնից իր հետ տանելով 125 որբերի, այդ թվում 43 նորածին «ծծկեր երեխա», քանի որ նախ՝ Էջմիածնում այլևս տեղ չկար, բացի այդ՝ կրծքի երեխաներին «պահող չկա»[108]: Երևանում գրողը դստեր հետ մնում է երկու-երեք օր՝ ըստ ամենայնի՝ օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 1-ը: Իջևանում է առաջնորդարանում՝ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի մոտ: Կազմակերպելով երեխաների, հատկապես ամենափոքրիկների ու նորածինների խնամքը՝ անմիջապես սեպտեմբերի 1-ին վերադառնում է Էջմիածին[109]:

Լսելով բանաստեղծի Երևան գալու լուրը՝ մայրաքաղաքում ապաստանած գաղթականներից շատերը շտապում են Թումանյանին հանդիպել կամ տարբեր միջնորդների միջոցով իրենց խնդրանքը ներկայացնել: Այդ խնդրանքները գրեթե նույն բովանդակությունն ունեին՝ ստեղծել ապրուստի միջոց, վաստակելու հնարավորություն, տեղավորել աշխատանքի, հայթայթել նյութական միջոցներ «ապրելու հնարավորությունն» ապահովելու համար: Վանում հայտնի գործիչ Խաչատուր Լեռնյանը Երևանի Ազգային առաջնորդարանի հասցեով 1915 սեպտեմբերի 2/15-ի մի երկարաշունչ նամակում Թումանյանին է ներկայացնում իր գրական ու հայագիտական վաստակը, բազմանդամ ընտանիքի անմխիթար վիճակը, մի դստեր մահը և անտանելի վիճակից դուրս գալու, երեխաներին նոր դժբախտության չմատնելու միակ հույսը կապում է գրողի հետ: Վստահ է, որ Թումանյանը կհասկանա իր առավել կարևորությունը մյուս գաղթականներից և իր համար աշխատանք կգտնի ու ընտանիքը կփրկի նոր կորուստներից.

«Մեծանուն գրագետ

Կբնակեմ... աղտոտ և հիվանդոտ գաղթականաց մեջ. աղտ փոխադրող սուրհանդակ ճանճերու տրամադրության ներքև ...սիրունիկ աղջկանս կորուստով իբրև զոհ տեղուն թյուրքի... Ձեզի կդիմեմ. Ձեզի, որ, ինչպես կհասկնամ, պաշտպան եք ինծպեսներու... անկարող եմ հանգստավետ տուն մը վարձելու և ազատվելու այս աղտաբույր մթնոլորտեն. մնացած զավակներս ալ զոհ չտալու համար... ինչքան կարելի է շուտով բարեհաճեք կարգադրություն մը ընիլ ...և ազատել զիս ու բազմանդամ ընտանիքս ներկա անտանելի կացությունե»[110]:

Սեպտեմբերի 2-ին Թումանյանը տեղեկանում է, որ այլևս թույլ չի տրվելու գաղթականներին տեղափոխել Էջմիածին - մահաստանից, քանի որ նրանց միջոցով համաճարակը կտարածվեր և մահաստանի կվերածվեր ողջ երկիրը: Հնարավոր է, որ Երևան իր մեկնումով գրողը փրկեց եթե ոչ 168 երեխայի, ապա գոնե նրանց մեծ մասի կյանքը: Սակայն ինչպես կարելի է ենթադրել «Արև» լրագրի հաղորդումներից և **«Օգնեցեք որբերին»** հոդվածից, Թումանյանը Երևանից գալուց հետո բանակցություններ է վարել Բաքվի հայոց գաղթականական հանձնաժողովի և Հայոց մարդասի-

108 Թումանյանի ընտանիքի նամականին, էջ 71:
109 Տես ԹԹ, Նոր նյութեր, թղթ 32:
110 ԳԱԹ, ԹՖ, N 1352 (152 3-րդ գ.)

րական ընկերության վարչության հետ, համաձայնության է եկել Էջմիածնից 350 որբեր Բաքու տեղափոխելու և այնտեղ որբանոց բացելու հարցի վերաբերյալ: Բաքվի «**Արևի»՝ 1915 թ. սեպտեմբերի 1-ի** վերոհիշյալ հոդվածում կարդում ենք Հայոց մարդասիրական ընկերության հայտարարությունը. «Մոտ օրերս սանիտարական գնացքով Էջմիածնից Բաքու են բերելու 350 որբեր, նրանց համար Բաքվում որբանոց է բացվելու... անհրաժեշտ են մահճակալներ, թե՛ փոքրերի, թե՛ մեծերի համար, մատրասներ, դոշակներ, բարձեր, շորեր, սպիտակեղեն, լվացարաններ և այլ պարագաներ... Օգնեցե՛ք, ամենքը, ով ինչով կարող է...»[111]:

Օգոստոսի 31-ին եղբորը՝ Արտավազդին հասցեագրած նամակում պոետի դուստրը պատմում է. «Գաղթականները արդեն ցրվում են, որբերը նորից շատացել են... Ես նոր գործ եմ սկսել՝ վանեցիներին ու շատախցիներին շաքար եմ բաժանում... Հայրիկը... շատ է ուզում գալ, հոգնել է, բայց գործը կիսատ թողնել չի կարող»[112]: Երևանից վերադառնալու օրը՝ սեպտեմբերի 1-ին, Էջմիածնից Թիֆլիս՝ Հայոց ազգային բյուրոյին ուղարկված Թումանյանի հեռագրում ասվում էր. «Մոտ երկու հազար փախստական ծնողներ ետ առան իրենց զավակները: Այսօր երեկոյան ժամը 7-ին Թիֆլիս ուղարկվեց 600 հոգի: Իգդիրի շրջանում, Էջմիածնում և Երևանում մեռնում են օրական մոտ 700 հոգի: Սպասվում է Վանից վերադարձող փախստականների մի հոսք՝ բաղկացած մոտ 25 000 հոգուց»[113]:

1915 թ. սեպտեմբերի 7-ին գրողը դարձյալ փորձում է հեռագրել ու ներկայացնել դրությունը Վաղարշապատում: Այդ հեռագրի սևագրության մեջ նշվում էր. «7 հազար մարդ են թաղել սեպտ. ու դիֆտերիտով... ու առայժմ նոր են (Բժիշկ Բաբաջանյանը) հարց հարուցում, թե միսը վատ է նրանց համար ...7 հազար մարդ է մեռել, կուբերը ինչո՞ւ չեն վառում գոնե այժմ փետ չկա: Առաջին՝ գլխավորը չթողնել կոտորվեն, մանավանդ այսուհետև ցուրտ գիշերներ են անելու և անձրևներ են գալու: 99 երեխա էսօր գերեզման ենք դնում (իրենք են ասում)»[114]:

1915 թ. սեպտեմբերի 8-ին Էջմիածնի մատենադարանում տեղի է ունենում «բժշկական կազմի» երկրորդ նիստը բժիշկ **Համո Օհանջանյանի** նախագահությամբ, մասնակցում են 18 բժիշկներ, «եղբայրական կոմիտեից» **Բաբկեն վարդապետ Վարդազարյանը** և «որբանոցի ներկայացուցիչ» Հովհ. Թումանյանը: Վերջինս առաջարկում է «Շուտափույթ ժողովել բաց երկնքի տակ գտնվող գաղթականներին, որովհետև շուտով կսկսվեն ցրտերը, և եթե կան գաղթականության մեջ փոքրիշատե առողջներ, դրանք էլ կհիվանդանան»[115]: Թումանյանին միանում է բժիշկ **Լ. Մյասնիկովը**, իսկ **Հայր Բաբկենը** նպատակահարմար է գտնում գաղթականներին պատսպարել վեհարանի նոր շենքում:

Իր օրագրում Թումանյանը վկայում է, որ որբանոցի երեխաներից հիվանդանում էին միայն նրանք, ովքեր իրենց այցելող ծնողներ ունեին, այսինքն՝ վարակը թափանցում էր դրսից: «Երեխաների մեջ հիվանդության

111 «Արև», Բաքու, 1915, սեպտեմբերի 1, չորեքշաբթի, N 137:
112 Թումանյանի ընտանիքի նամականին, էջ 72:
113 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 10, էջ 230:
114 ԹԹ, Նոր նյութեր, թղթ. 32:
115 «Հորիզոն», Թիֆլիս, 1915, N 215:

դեպքեր պատահում են գրեթե բացառապես նրանց մեջ, որոնք հեր ու մեր ունեն – գնում են գալիս.... որբերի մեջ ոչ մի հիվանդություն չկա»[116]:

Էջմիածնում անցկացրած շուրջ երկու ամսվա ընթացքում գրողն աշխատում էր «գիշեր ու ցերեկ», իսկ հանգստի հազվադեպ պահերին դժգոհում էր «և՛ հոգևորականությունից, և՛ գաղթական զանազան կոմիտեներից, և՛ Եղբայրական օգնության կոմիտեից, և՛ տեղի կազմակերպություններից, որ չեն կարողանում գործը կազմակերպել, ժամանակին օգնել գաղթականությանը: Հուզվում էր, վրդովվում, երբ պահեստներում տեսնում էր ուտեստեղեն և հագուստ, որ ժամանակին ու նպատակահարմար չէին բաժանում: Նա իր վրա առավ այդ դժվարին գործը: Կոմիտեների պահեստները բացեց և զանազան իրեր ու ամաններ, գդալներ, սպիտակեղեն, որոնց կարիքը շատ էին զգում գաղթականները, հանեց ու բաժանեց»[117]:

Ըստ Նվարդի հավաստիացումների իրերն ու հագուստը որոշել էին բաժանել գիշերով. «Գիշերները, երբ գաղթականները քնած էին լինում, նրանց կողքին գալեթ էինք դնում, ինչպես և սպիտակեղեն, շորեր: Ամեն օր տալիս էինք թեյ, ճաշ, զանազան դեղորայք էինք բաժանում դիզինտերիայի դեմ»[118]:

Էջմիածնից դստեր հետ Թումանյանը դուրս է գալիս սեպտեմբերի 15-ին և վերադառնում Թիֆլիս հիվանդ, ծերացած և ուժասպառ: Հենց Էջմիածնում սպիտակեցին 46-ամյա բանաստեղծի մազերը: Նվարդի խոսքերով՝ Թումանյանը Էջմիածնից «Վերադարձավ բոլորովին փոխված, մոտ երկու ամիս մնաց հիվանդ պառկած: Տխուր էր, ոչ ոքի չէր ընդունում, ոչինչ նրան չէր հանգստացնում Հայրիկը հոգնած էր, թույլ, առողջությունը քայքայված»[119]: Վերականգնվելու համար առնվազն տևական շրջան բժշկի ու հանգստի կարիք ուներ, մինչդեռ երկու օր անց գուժելու էին եղբոր՝ Ռոստոմի սպանության լուրը: 1915 թ. հոկտեմբերի 10-ին արձանագրում է. «Ես էլ էս բոլոր վշտերից ու նեղություններից համարյա ծերացել եմ»[120]:

1915 թ. նոյեմբերին Թումանյանը շտապում է հանդիպել Թուրքիայից Բալկաններով, Բեսարաբիայով Թիֆլիս հասած, երեք օրվա ճանապարհը 40 օրում անցած արևմտահայ մտավորականների մի խմբի, որոնց մեջ էր նաև **Զապել Եսայանը:** Ռուսական իշխանությունները նրանց վերաբերվել էին իբրև պատերազմական գերիների: Ինչպես նշում է Զ.Եսայանը, ամենքի հետ ինքն էլ «զգացեր և ճաշակեր» էր ցարական ռեժիմի «քաղցրությունները»: Որոշ տղամարդկանց «անհետացրել» էին, այսինքն՝ գնդակահարել, աքսորել կամ պատերազմ էին ուղարկել ցարական իշխանությունները: 1915 թ. նոյեմբերի 1-ին հանդիպելով այդ խմբին՝ գրողը վերստին համոզվում է Ռուսաստանի վարած նվաճողական քաղաքականության մեջ: Զ. Եսայանը պոետի խոսքերը շարադրել է բառացի. «-Իմանո՞ւմ եք, կըսեր Հովհ.Թումանյանը ցաված և հուզված շեշտով,-Ռուսաստանը ուզում է նվաճել արևելյան վիլայեթները և սրա համար օգտագործում է հայ ժողովրդի ազգային զգացումը, խոստումներ է անում, հեռանկարներ է

116 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 410-411:
117 **Նվարդ Թումանյան**, Հուշեր և զրույցներ, էջ 129:
118 Նույն տեղում:
119 Նույն տեղում, էջ 130:
120 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 10, էջ 232:

ցույց տալիս... բայց և շահագրգռված է այդ խոստումները չկատարել: Նրան պետք են արևելյան վիլայեթները, բայց առանց հայի»[121] :

Մի ամբողջ տարի՝ մինչև 1916 թ. հունիսը, գրողի ֆիզիկական վիճակի մեջ որևէ բարելավում չէր նկատվում. «Շատ եմ հոգնած ու թույլ»[122]: Սակայն նա վստահ էր, որ «**ում վրա որ էդքան հոգի մտիկ են անում, նա սարի նման պետք է լինի»**[123]: Թումանյանը պարզապես շատ քչերին էր իր թուլության մասին խոստովանում: Այդ քչերից էր Զապել Եսայանը, որին 1916 թ. օգոստոսի 1-ին գրում է. « ...Շատ բան է խորտակվել ինձ համար աշխարհքում, և աշխարհքը շատ ցավերով է լցված արդեն: Շատ բան կա, որ էլ չեմ սիրում, և բաներ էլ կան, որ սիրում եմ, բայց տեսնել չեմ կարող: Օրինակ, էն օրվանից հետո, որ տեսա մորս՝ սպանված եղբորս դիակի վրա, և մյուս սպանված եղբորս (սպային) էլ թաքցրինք, որ նա չիմանա, այլևս չեմ կարողանում տեսնել նրան - իմ մորը»[124]: Թումանյանը Թումանյան չէր լինի, եթե այս խոսքերի, անձնական վշտի խորության մասին խոսելիս անմիջապես չպատմեր իր ամենամեծ ցավի՝ հայոց վշտի մասին. «Անցյալ տարի էս ժամանակ, Էջմիածին էի: Անկարելի է պատմել, թե ինչ էր Էջմիածինը անցյալ տարի էս ժամանակ: Բայց ամիս ու կես մնացի, զբաղված էի գլխավորապես որբերով, և, իհրավի, էն ժամանակ էլ ես և՛ տեսնում էի, և՛ զգում էի դժբախտության և թշվառության ահռելիությունը, բայց միայն հեռանալուց հետո, մանավանդ այժմ է, որ չեմ կարողանում նրանց տեսնել, ինչպես և գաղթականներին առհասարակ, բայց մանավանդ նրանց - որբերին:

Տեսնելու համար հսկայական ուժ է հարկավոր, իսկ ես, ինչպես արդեն գրեցի, շատ եմ ջարդված, հոգնած ու տկար... չնայած իմ անսպառ լավատեսությանը և բնավորության զվարթությանը, թախիծը, որ ասում եմ, իրական է ու, ավա՜ղ, մշտական, անանց»[125]:

Թիֆլիս վերադառնալուց հետո էլ շարունակվում էր աղետյալների ու գաղթականների խնդրանքների տարափը: Վաղարշապատի N 1 հիվանդանոցի բժիշկ դեղագործ Հարությունյանը և Վարդան Դարբինյանը 1915 հոկտեմբերի 4-ին դիմում են Թումանյանին, որ նա Էջմիածնից Կովկասի տարբեր վայրերի որբանոցներ տեղափոխված որբերի մասին տեղեկություններ հայտնի և իրենց աշխատանքի տեղավորի հնարավորինս շուտ. նամակում ասվում էր.

«Մեծարգո Հովհաննես Թումանյան,

«Հորիզոնի» մեջ կարդացի, որ 500 որբերեն 300-ը Բաքու, 100-ը Կրծանիս, 100-ը՝ Ախլցխա ղրկվեցան: Ես հատկապես կխնդրեի, որ շնորհեք այն տեղերը փնտրել տալ մեր տղաները ... N 1 հիվանդանոցի մեջ իբրև դեղագործ կաշխատեի, բայց վերջերս միանալով N 2 հիվանդանոցի հետ, ահա դեղագործի կարիք չմնալով՝ ամսույս սկզբեն այստեղ անգործ ման կուգամ,... Կխնդրեի հանուն մարդասիրության զիս ազատեք այս անգործութենե... պաշտոն մը հայթայթել ինձ, որով անհատապես երախտապարտ

121 ԹԺՀ, էջ 152:

122 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 10, էջ 240:

123 Նույն տեղում, էջ 232:

124 Նույն տեղում, էջ 245:

125 Նույն տեղում:

կթողուք գիս և պատեհություն կուտաք իմ տիկնոջս հետ Թիֆլիս ապրելու...»[126]:

Հոկտեմբերի առաջին օրերին անկողնուն գամված Թումանյանը որբեր է որոնում տարբեր քաղաքների որբանոցներում, փորձում է աշխատանք գտնել ծանոթան-ծանոթների համար, մյուս կողմից գրում է **«Թանկ մարդու հիշատակին»** հոդվածը[127]՝ Էջմիածնում համաճարակին զոհ դարձած **Սաթենիկ Օհանջանյանի** հիշատակին: Այդ հոդվածով նա իր երախտիքի ու հիացմունքի, նաև խոնարհումի խոսքն էր ասում այն երիտասարդ հայուհիներին, ովքեր, արձագանքելով իր կոչին, եկան ու իրենց կյանքի գնով խնամեցին որբերին: Չէ՞ որ այդպիսի ճակատագրի կարող էին արժանանալ նրանցից յուրաքանչյուրը, այդ թվում նաև իր դուստրը[128]: Բանաստեղծը մեկնում է, թե ինչու էր իր համար այդքան թանկ Սաթենիկը, ինչո՞ւ է այդքան մահերի մեջ նրա մահը առավել հուզիչ. **«Նա թանկ էր, որովհետև էն հազվագյուտ անձնավորություններից մեկն էր, որոնք ավելի շատ ուրիշների համար են ապրում: Չէ՞ որ աշխարհքում մարդիկ կան, որ ապրում են միայն իրենց համար, մարդիկ կան, որ ապրում են ուրիշներին տանջելու համար, մարդիկ էլ կան, որ ապրում են տանջվողներին օգնելու համար:**

**Եվ, ավա՜ղ, ամենից քիչը հենց սրանք են աշխարհքում: Սրանցից՝ էս քչերից, էս թանկերից մինն էր մեր օրիորդ Սաթոն**»[129]:

## 10. Ժամանակակիցների գնահատականները

1915-ին Էջմիածնում գրողի անձնազոհ գործունեությունը գնահատվում է ոչ միայն այսօր, այլև հենց իր ապրած օրերում, նույնիսկ այն պահին՝ 1915 թ. օգոստոսի 30-ին, երբ նա դեռ Էջմիածնի դժոխքում էր: Այդ օրը Բաքվի Հայոց Մարդասիրական ընկերության դահլիճում տեղի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի նախագահությամբ տեղի ունեցած բազմամարդ ժողովում **Ռուբեն Օհանջանյանը** փախստականներին օգնելու գործի կազմակերպման ընթացքի մասին զեկուցելիս հիշատակում է Թումանյանի գործունեությունը, որի ընթացքում բազմաթիվ որբ երեխաների վիճակը նշանակալի չափով բարվոք է դարձել:

Եվ իրոք, Էջմիածնում գերմարդկային ճիգերով բանաստեղծը փորձում էր դիմանալ հայրենազրկության վշտին, մարդկային ամեն երևակայությունից դուրս մարդակեր գազանի ոճրագործությունների ու կոտորածի ողբերգությանը, իր երկու եղբայրների սպանության, որդեկորույս մորը

126 ԳԱԹ, Թֆ, N 1125:

127 Հոդվածը տպագրվել է «Հորիզոնում»՝ 1915 թ. հոկտեմբերի 4-ին:

128 Սեպտեմբերին Սաթենիկը պետք է թողներ Էջմիածինը: Նա վարժուհի էր և պարտավոր էր ներկայանալ դպրոց՝ աշխատանքի: Սակայն որոշում է մնալ Էջմիածնում. արձակուրդ է խնդրում. մերժում են: Խնդրում է Թումանյանի միջնորդությունը: Բանաստեղծը, տեսնելով Սաթենիկի ուժասպառ վիճակը, փորձում է նրան հեռու պահել նոր դժվարություններից, սակայն աղջիկը համառում է. «Ես էլ, նկատելով, որ շատ է հոգնած, որ որբանոցի երկու հարյուրից ավելի ծառայողներից մի քսան-երեսուն հոգի հազիվ են ազատվել հիվանդությունից ու քանիսն էլ մեռել են, չմիջամտեցի ու խորհուրդ տվի, որ մի քիչ հանգստանա» (**Թումանյան**, ԵԼԺ, հատ. 7, էջ 178): Սաթենիկը հանգստանալու խորհուրդը լսելու փոխարեն մի քանի օրով մեկնում և հրաժարվում է վարժուհու առավել հանգիստ աշխատանքից ու վերադառնում Էջմիածին, մեկ ամիս անց մահանում:

129 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 7, էջ 178-179:

խաբելու, գրեթե բոլոր զավակների կյանքը վտանգի տակ լինելու, գրական կյանքից հեռանալու, անձնական և հայոց վշտին: Այս ամենը պետք է դուրս հորդեր նրա արվեստում: Էջմիածնից վերադառնալուց հետո, 1915 թ. նոյեմբերին Թումանյանը գրում է **«Հոգեհանգիստը»,** որով այդ պահին գտնում է հայոց վիշտը հաղթահարելու, տառապանքից բեռնաթափվելու միակ ելքը: Բանաստեղծությունը հայ քնարերգության լավագույն էջերից է, Եղեռնի թեմայով գրված հայ պոեզիայի անգերազանցելի, հզոր քերթվածներից մեկը: Թերևս դրա պատճառներից էր ոչ միայն գրողի անուրանալի տաղանդը, այլև այն ամենը, ինչ նա տեսել ու զգացել էր անձամբ: Ամենայն հայոց բանաստեղծը ծանր ապրումների մեջ այլևս չէր կարող լավատեսության կամ նույնիսկ մխիթարանքի խոսք ասել, նա պարզապես տառապում էր իր ժողովրդի հետ միասին, **բոլորի հետ, բոլորից ավելի** ու նահապետի իրավունքով հոգեհանգիստ էր կարդում իր ողջ ժողովրդի անբախտ զոհերին:

**– Հանգե՛ք, իմ որբեր… իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ…**
**Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա…**[130]**:**

Մարդկային նկարագիրը կորցրած մարդակեր գազան մարդու թեման Թումանյանը արծարծեց նաև երեք ամիս անց **1916 թ. փետրվարին,** իսկ ավելի ուշ իր անզուգական քառյակներում: Դաշնակցական գործիչ **Արշակ Ջամալյանը** պատմում է, թե Ազգային բյուրոյի նիստում ինչպես է արձագանքում բանաստեղծը Սասունի ջարդերի ականատես զինվորի՝ Մարտիրոս վարժապետի պատմածներին՝ կոտորածի զարհուրանքների (անդամահատված մարմիններ, կտրտված ստինքներ) մասին. «Ամենքս ցնցված էինք, իսկ Թումանյանի դեմքը սպիտակ ծեփի գույն էր առել: Երբ պատմեց, թե ինչպես հայ կնոջը ստիպել էին խմել սեփական զավակի արյունը՝ սուլթանի կենացը, Թումանյանը ելավ տեղից և դողդոջ քայլերով մեկնեց նիստից: Մի ամբողջ շաբաթ նա հիվանդ էր»[131]:

Ահա այս ծանր ու դաժան տպավորությունից է ծնվում **«Դժոխքի հանդեպ»** բանաստեղծությունը, որը լույս է տեսնում «Հորիզոնում» 1916 թ. փետրվարի 28-ին: Ձեռագրի հաջորդ երեսին գրված էր. **«Տղամարդկանց կոտորել են, ջահել կանանց տարել-մնում են պառավ մայրերը, հսկում են դաշտում իրենց որդիների դիակներին: Մի-մի ճյուղ առած հեռու են քշում գիշերը … գիշատիչ գազաններին ու ցերեկը թռչուններին, որ չծվատեն, չուտեն նրանց մարմինները»**[132]**:**

Հայոց դժոխքը բանաստեղծին ներկայանում է անթաղ դիակների, բազում մարդկային կմախքների ու ոսկորների տեսքով, ոռնացող հողմերի առջև կանգնած խենթացած մոր տեսքով.

**Կանգնած է մայրը հողմերի տակին.**
**Որդու արյունը իր ձեռքն են տվել.**
**– Խմի՛ր սուլթանի կենացը դու էլ…**

130 **Թումանյան**, ԵԼԺ 1, էջ 280:
131 «Վեմ», Ա, Փարիզ, 1933, էջ 21:
132 «Հորիզոն», 1916, N 46, փետրվարի 28:

**.....Սարսափի պիտի աշխարհի բովանդակ**
**Եվ մարդն ամաչի գիլից ու շանից**
**Որ մարդ է ծընվել՝ մարդու նըմանից**[133]**:**

Թումանյանը դարձավ հայրենազրկված ազգի նահապետը ու նաև որդեկորույս հայր: 1918 թ. գարնանը Վանից Համադան ճանապարհին դարավոր թշնամու սրից դաժանաբար զոհվեց բանաստեղծի որդին՝ տաղանդաշատ Արտավազդը, որը երեք տարի շարունակ Վանում ու Վասպուրական աշխարհում ամեն ինչ անում էր վանեցիների հոգսերը հոգալու համար: Որդու եղերական մահը Թումանյանի անձնական կյանքի ամենաողբերգական դրվագն է, որը բացառիկ է այդքան մահեր ու ավեր տեսած մեծ տառապյալի հոգեկան աշխարհի վրա թողած վիթխարի ներգործությամբ: Գրողի անափ վիշտն ու վիթխարի այս տառապանքը չէր կարող գեղարվեստական խոսքի կերպարանք չստանալ. նրա յուրաքանչյուր քառյակում, հայոց մեծ վշտի մասին յուրաքանչյուր տողում պետք է որոնել նաև պոետի անձնական ցավը.

**Էնքան շատ են, ցավերն, ավերն իմ սրտում,**
**Էնքան տըրտում կորած լավերն իմ սրտում...**
**Չեմ էլ հիշում չար ու խավար էս ժամին՝**
**Երբ են փայլել ուրախ օրերն իմ սրտում** [134]**:**

Սակայն անձնական ցավը չընդմիջեց գրողի ազգային գործունեությունը: 1920 թ. փետրվարին Վրաստանի Հայոց ազգային խորհրդին կից Հայաստանում դաշնակիցների գերագույն կոմիսար գնդապետ Հասկելի (նշանակվել էր 1919 թ. ամռանը) նախաձեռնությամբ կազմվեց **Հայ որբերի և գաղթականների օգնության հանգանակիչ կոմիտե,** որի նախագահ ընտրվեց Թումանյանը[135]: Կոմիտեի անդամներն էին Դաշնակից պետությունների գերագույն կոմիսարի ներկայացուցիչ **Էրնեստ Հարրոուն, իշխան Բորիս Արղության Երկայնաբազուկը (գանձապահ) և Տիգրան Հովհաննիսյանը (քարտուղար)**[136]**:** Թումանյանն արդեն ի պաշտոնե ստանձնեց մի գործ, որը վաղուց նախաձեռնել էր անձամբ: Որպես հանգանակիչ այդ մարմնի նախագահ՝ նա խորհրդակցությունները հրավիրում էր իր տանը:

Որբերի նկատմամբ գրողի հայրական ջերմ հոգատարությունն ու խանդաղատանքը երբեք չմարեց: 1920 թ. նա, գրքերի հրատարակության իր իրավունքը վաճառելով, ստացած գումարից 10000 ռուբլի հատկացրեց հայ որբերին, 10000 ռ.՝ Վրաստանի Գորիի երկրաշարժից տուժածներին, 10000 ռ. էլ՝ Ռուսաստանի սովյալներին[137]:

Եվ քանի որ Թումանյանը ապրեց «ողբի ու որբի» հայրենիքում, ամեն ինչ արեց՝ այդ որբաշխարհի, հայ ողջ գաղթականության անլուր տառապանքները փոքր-ինչ թեթևացնելու համար՝ դառնալով անմայր մանուկ-

133 **Թումանյան**, ԵԼԺ 1, էջ 284:
134 Նույն տեղում, հատ. 2, էջ 62:
135 Տե՛ս «Слово», 1920, N 48, փետրվարի 29:
136 Տե՛ս «Слово», 1920, N 88, ապրիլի 21:
137 Տե՛ս «Աշխատավոր», Թիֆլիս, 1920, N 55:

ների ամենահարազատ անձը՝ **«Ամենայն հայոց որբերի հայրիկը»:**

Թումանյանը միշտ, իր կյանքի ողջ ընթացքում ապրում էր գրականության ու արվեստին անմնացորդ նվիրվել չկարողանալու դրաման: Դաժան ժամանակը խանգարում էր: Զգում էր, որ տարիներն անցնում են, իսկ ինքը իր ողջ եռանդն ու կյանքը նվիրում է ժողովրդի ազգային-քաղաքական խնդիրների լուծմանը, նրա ճակատագրին վերաբերող հարցերով ապրելուն, պարզապես մարդկային կյանքեր փրկելուն: Գրեթե միշտ ամբողջությամբ նվիրվում էր սպասվող աղետները հնարավորին չափ կանխելու կամ հետևանքները վերացնելու, առնվազն՝ մեղմելու գործին, իսկ գրականությունը մնում էր ու մնում: Այդպիսի պահերին նա իրեն զգում էր Մոլլա Նասրեդդինի պես վարար ջրի ափին նստած սպասելիս. «Ասին՝ ընչի ես սպասում: – Թե՝ սպասում եմ գետն անց կենա, որ հետո ես անց կենամ: Ճիշտ էսպես. մենք էլ սպասում ենք՝ էս ժամանակն անց կենա, որ մեր ուզած կյանքով ապրենք, պարապենք…ու շարունակ սպասում ենք»[138]:

Սակայն Թումանյանը արդար չէր իր նկատմամբ, որքան էլ ազգային գործիչը խանգարեր բանաստեղծին, այնուամենայնիվ, նույնիսկ միայն «Հայրենիքիս հետ»-ն ու «Հոգեհանգիստ»-ը, միայն քառյակները բավական են, որ վկայեն Եղեռնի տարիներին նրա ստեղծագործ ոգու հերթական հաղթանակի մասին:

**Եղեռնի տարիներին Թումանյանի ինքնամոռաց սխրանքն ու անձնվեր գործունեությունը բոլոր ազգերի պատմության մեջ հայրենասիրության ու մարդասիրության վառ օրինակ է: Յուրաքանչյուր ազգ կհպարտանա իր ցանկացած ներկայացուցչի, այն էլ մշակույթի գործչի այդպիսի վարքագծով, ի լուր աշխարհի կազդարարի, որ ինքը ծնել է այնպիսի մի բանաստեղծ-գործչի, որ պահպանելով աստվածաշնչյան բոլոր պատվիրանները, անցնելով արիության ու անձնազոհության բոլոր սահմանները, մարդ լինելը հռչակելով բարձրագույն կոչում, դարձել է շքեղ զարդարանք մարդկության համար:**

## Summary

### HOVHANNES TUMANYAN IN THE MAELSTROM OF THE GENOCIDE

Susanna G. Hovhannisyan

**Key words** – Hovhannes Tumanyan, Echmiadzin, refugees, orphans, genocide, diaries, drafts, records, children, Nvard, Satenik Ohanjanyan, Western Armenia, Van, Alashkert, Erzrum, Mush, Berkri, Tiramerik, Abaga, Khndzorken, Bitlis, Datvan, Panchi, Manazkert.

The article introduces a few episodes of Tumanyan's activities in Echmiadzin during the period of the Armenian Genocide, particularly August-Sep-

138 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 10, էջ 253:

tember of 1915. Tumanyan's diaries kept many testimonies about the life of orphans and refugees sheltered in Echmiadzin during that period.

Heroism of a teacher Hakob Jrbashyan and Arpiar Safrastyan to save 300 children of a bording school of Varag is represented, the incidents, which took place while migrating to Igdir from Shatakh, Archesh, Van, Alashkert, Erzrum, Mush and other regions of Western Armenia, as well as description of massacre which took place in Gortsot, Tiramerik, Abagha, Berkri, Khndzorken, Bitlis, Mush, Datavan, Panchi and other places are represented. There are also facts about material losses of the Armenian people in Manazkert and Western villages: statistical data about the refugees who had become victims of epidemic during a month in Echmiadzin, which are expressed in Tumanyan's telegrams sent to the Armenian National Bureau.

18 out of 100 articles of literary-critical, political-public nature written by the poet during the period from 1914 to 1918 remained unfinished and in draft condition which often remind records. Today these drafts have also value of ratification: they express testimonies and thoughts of the poet as a witness of Genocide. The author emphasized horrors of Genocide and created an image of human-beast.

The poet's orphan-protecting activities started in Echmiadzin which continued until the end of his life. In February of 1920 by the initiative of Haskel / High Commissioner Colonel of Allies (appointed in summer of 1919) / Armenian Orphans and Refugees Subscription Committee was formed and Tumanyan was elected as chairman.

Tumanyan's selfless bravery and multi-layer devoted activities carried out during Genocide period are considered to be a striking example of humanity and patriotism in the history of all nations.

## Резюме

### ОВАНЕС ТУМАНЯН В ВОДОВОРОТЕ ГЕНОЦИДА АРМЯН

Сусанна Г. Ованесян

**Ключевые слова** – Ованес Туманян, Эчмиадзин, беженцы, сироты, Геноцид, дневники, черновики, записи, дети, Национальное Бюро, Нвард, Сатеник Оганджанян, Западная Армения, Ван, Алашкерт, Эрзрум, Муш, Беркри, Тирамерик, Абага, Хндзоркен, Битлис, Датван, Панчи, Маназкерт, Отец всех армянских сирот

Статья представляет несколько фрагментов деятельности Ов. Туманяна в период Геноцида армян, в частности, в августе-сентябре 1915 г. в Эчмиадзине. Дневники Туманяна сохранили многочисленные свидетельства о жизни сирот и беженцев, нашедших в это время приют в Эчмиадзине. Описываются подвиги учителя Акопа Джрбашяна и Арпиара Сафрастяна,

спасших жизни трёхсот учащихся школы-интерната Варага, приводятся описания событий, происходивших во время отступления и бегства из Шатаха, Арчеша, Вана, Алашкерта, Эрзрума, Муша и других местностей Западной Армении в направлении Игдира и Эчмиадзина, а также описания погромов в населённых пунктах Горцот, Тирамерик, Абага, Беркри, Хндзоркен, Битлис, Муш, Датван, Панчи и других. Приводятся также факты о материальных потерях армян в Маназкерте и других западноармянских городах и сёлах, статистические данные о беженцах, ставших в Эчмиадзине в течение одного месяца жертвами эпидемии. Данные эти приводятся в телеграммах Туманяна, адресованных Армянскому национальному бюро.

Восемнадцать из почти ста статей литературно-критической и социально-политической направленности, написанных поэтом в 1914–1918 гг., остались незавершёнными и в черновом виде: они зачастую напоминают записи и наброски. Сегодня эти черновые материалы имеют ценность документов, в них нашли выражение свидетельства и раздумья поэта, ставшего очевидцем Геноцида. В них автор показал ужасы геноцида, обрисовал образ человека-зверя.

В Эчмиадзине началась деятельность поэта по оказанию помощи и поддержки сиротам, которая продолжилась до конца его жизни. В феврале 1920 г. при Армянском национальном совете Грузии по инициативе генерального комиссара союзников в Армении полковника Гаскеля (получил назначение летом 1919 г.) был образован Комитет помощи армянским сиротам и беженцам, председателем которого был избран Туманян.

Самоотверженный подвиг и многогранная деятельность Туманяна в годы геноцида в истории народов являет собой яркий пример подлинного патриотизма и человеколюбия.